This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

**Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

**About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

~~283~~ 423

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ
## ԸՆԿԵՐՈՎԻ ԻՐԱՒԱՆՑ
## ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ
## ԵՒ
## ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆՑ
## Ի ՏՆՕՐԻՆԱԿԱՆ Ս. ՏԵՂԻՍ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՄՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
1880

UNIVERSITY OF
Digitized by Google

Digitized by Google

Bovandakutiun azgayin sephakanuteants
739

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ

ԸՆԿԵՐՈՎԻ ԻՐԱՒԱՆՑ

ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆՑ

Ի ՏՆՕՐԻՆԱԿԱՆ Ս. ՏԵՂԻՍ



125 ք.

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

1880

Digitized by Google

Grad
EREN
423
BUHR

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

# Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Տ. ՆԵՐՍԻՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Digitized by Google

# Ա Զ Դ

ՆԵՐԿԱՅ տետրակս կը պարունակէ Տնօրինական Ս. Տեղեաց մէջ Ազգ. սեպհականութիւնները, Յունաց եւ Լատինաց հետ ընկերովի իրաւունքները, արարողութիւնները եւ սովորութիւնները՝ հաստատեալք 'ի վաղ ժամանակաց եւ նուիրագործեալք Եգիպտոսի եւ Օսմանեան բարեյիշատակ Սուլթանաց հրովարտակներով:

Թէեւ Ս. Աթոռոյս նախկին բազմաշխատ Միաբանները այս մասին անփոյթ չ'են գտնուած, այլ ժամանակի ներածին չափ աշխատած են Ազգին ծանօթացնել Ս. Տեղեաց մէջ իւր իրաւունքները, մանաւանդ Յովհաննէս եպիսկոպոս. Հաննէ վարդապետ կոչեցեալ, իւր Պատմութեամբ Երուսաղէմի, եւ Մկրտիչ վարդապետ Արծրունեանը Ստորագրութեամբ Ս. Քաղաքին Երուսաղէմի. բայց տեղւոյն գրած եւ որոշած են Ազգային մէն մի իրաւունքները, թէեւ ոչ կարգաւորութեամբ: Պատմութեան, կամ Ուղեցոյց Ս. Տեղեաց Գրքոյկին մէջ եւս ոչ սակաւ ծանօթութիւններ կային այս նիւթին վերայ. բայց առաջինները սպառած՝ եւ երրորդը անբաւական ընթերցող Ազգայնոց հարցասիրութիւնը գոհացնելու, ներկայս պատրաստուեցաւ առաջարկութեամբ Ազգ. Վսեմ. Պատուիրակ Ստեփան փաշայի Ասլանեան եւ որոշմամբ Միաբանական Յանձնախմբի, որ կազմուած էր անցեալ տարւոյ վերջը Ազգ. Պատուիրակին գործակցելու Ս. Աթոռոյս վիճակը բարւոքելու պաշտօնիւ:

Digitized by Google

Գործոյս գլխաւոր աղբիւրներ եղած են վերոյի-շատակեալ տպեալ Պատմութիւններէն զատ, Նաեւ ձեռագիր յիշատակարաններ, Տեսչաց արձանագրու-թիւններ, հին հրովարտակներ. իսկ արարողութեանց և սովորութեանց մասին՝ Շաքարճեան և Տորէճեան Նո-ծոռներու տպեալ տետրակներ ։

Կը յուսամք, որ հարցասէր Ազգայինք գոհ պի-տի լինին ընթերցասիրելով տետրակս եւ իմանալով այն ամեն իրաւունքները, զոր կը վայելէ Ազգը եր-կար դարերէ հետէ շնորհիւ Օսմանեան Տէրութեան եւ աշխատութեամբ Միաբանութեան Ս. Յակով-բեանց ։

Ս. Վ. Խաղայենց

Digitized by Google

# ՄԱՍՆ Ա

## ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Սուրբ Յարութեան հոյակապ Տաճարը, որ բոլոր Քրիստոնէից ուխտատեղին եւ սրբազան ու նուիրական վայրն է, շինուած է Երուսաղէմի հիւսիսային կողմը՝ գրեթէ քաղաքին կեդրոնը՝ Մեծին Կոստանդիանոսի և Մօրն նորա Հեղինեայ և Հայոց Տրդատայ ժամանակները։ Շատ անգամ ամբողջական և մասնակի կործանումներէ յետոյ, 1868ին մեծ գմբէթը նորոգուեցաւ Օսմանեան Տէրութեան խնամօք և դրամական մասնակցութեամբ Ռուսիոյ և Գաղղիոյ կառավարութեանց։ Սոյն Տաճարին մէջ ընկերովի իրաւունք կը վայելեն և մշտնջենաւոր սրբազան պաշտօն կը կատարեն գլխաւորապէս Հայք, Յոյնք և Լատինք և ի մասնաւորի Ղպտիք և Ասորիք։

Digitized by Google

# ԳԼՈՒԽ Ա

## ԱԶԳԱՅԻՆ ՍԵՊՀԱԿԱՆ ՏԵՂԻՔ Ի Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Յարութեան մէջ հրովարտակներով և այլ վաւերական գրերով հաստատուած Հայոց ազգային սեփականութիւններն են ,

1°. ԴՌՆԱՊԱՆԱՑ ՆՍՏԱԾ ՏԵՂՆ. Ս. Յարութեան երկփեղկեայ դրան[1] անմիջապէս ետեւը՝ ձախ կողմը տեղ մի է, ուր կընստին Մահմետական դռնապանները, երբ դուռը բանան. այս տեղւոյն վրան, որոյ մէջ կը բացուին Ղբտւոց սենեկի պատուհանները, նոյնպէս Հայոցն է, բայց տեղւոյն փռոցները ընկերութեամբ են. կան երեք ազգաց, այն է Հայոց, Յունաց և Լատինաց առանձին

(1) Ըստ առանձնաշնորհութեան Սուլթան Սէլիմի հրովարտակին սոյն դրան ներքնակողմի վերին ձեղունը եւ սորբին յատակը մինչեւ վերնատան կամարի սահմանը Հայոց սեփական եղած է, բայց 1813ին Յունաց և Լատինաց ընդդիմութեամբ երեք ազգաց ընկերական իրաւանց կարգն անցած է։

պահարաններ, որոց մէջ կը պահուէին տեղւոյն վերաբերեալ փորուածքները։

2°. ՈՒԺԱԹԱՓՄԱՆ ՏԵՂԻ եւ ՏԵՍՉԻ ՍԵՆԵԱԿ. Պատանատեղւոյն արեւմտեան կողմի կամարածածքը Հայոցն է, ինչպէս նաեւ ստորին մեծ կամարը, որոյ մէջտեղէն կախուած մի լապտեր և երկու կողմը մէյմէկ պատկերներ ունին։ Այն մեծ կամարին վրայ դէպ արեւմուտք երկու փոքրիկ եւ միաձեւ կամարներ եւս կան, որք Հայոց միաբանից սենեկի տեղ կը ծառայեն, իսկ արևելեան կողմը երեք պատկեր ունին։ Դրսուց սենեկի դռնէն, որ 'ի հարաւ կը բացուի, մինչեւ վերնատան քարեայ սանդուխը դետեղուած են Հայոց զգեստուց միակտուր պահարանները։ Այս պահարաններուն գրեթէ արեւմտեան ծայրին առջեւն է Ուշաթափման 'տեղին։ Ըստ աւանդութեան՝ Աստուածամայրը այս տեղէն առաջին անգամ՝ իւր միածին Որդին խաչին վրայ տեսնելով՝ ուշաթափ ինկաւ սուրբ կանանց թեւերուն վրայ։ Այն տեղը երկաթեայ բոլորշի և գմբէթաւոր վանդակի մէջ է. գմբէթի կեդրոնէն մշտավառ կանթեղ

մի կախուած է. գմբէթին գլուխը ջահ մի կայ հաստատեալ և մի բիւրեղեայ ջահ եւս նորա վերայ առաստաղէն առկախ, որոյ բոլորտիքը չորս կանթեղներ կախուած են նոյնպէս առաստաղէն: Այս տեղւոյն դիմացի պատին (*) առջեւ տախտակեայ նստարան շինած են Հայք, ուր կը նստին իրենց Տեսուչը, Միաբանք և Ուխտաւորք: Պատին վերայի վարագոյրք եւ պատկերը եւ պատկերին առջեւի կանթեղը՝ առաստաղէն կախեալ՝ Հայոց են և 'ի սկզբանէ անտի Թափորի խաչվառները այս տեղ կը դրուին: Նստարանին հիւսիսային ծայրը չորրորդ սեան առջեւ դըրուած է Հայոց Տօ—սը—խը, որոյ վերայ պատկեր մի կայ. Երրորդ սեան առջեւն է մոմավաճառի սնտուկը: Այս տեղի երեք կամարները եւ երեք սիւները որ 15, 16 և 17 թիւերը կը կրեն Հայոց են կանթեղոց շարաններով և առաջինն կանթեղներով. երեք սեանց իւ-

---

(2) Այն պատը Յունիս 1810 թուականի շինութեան ատեն մէկ կանպնաշաղի յառաջ բերին իրենց տեղերը լայնցնելու համար.

Digitized by Google

թաքանչիւրին Գերեզմանի կողման երեսներուն վերայ Տէրունական մէկ մէկ մեծ պատկեր և նոցա առջև կանթեղներ կան ։ Վերջապէս այս ամեն տեղերուն իբրև Ազգային սեպհական իրաւանց , թէ՛ գործածութեան և թէ՛ շինութեան միջամտելու ո՛չ մէկ ազգ իրաւունք ունի ։

Վերնատան սանդուխին ոտքը եղած դուռը , որ 'ի հիւսիս կը նայի , Հայոց Տեաչի սենեկին դուռն է ։ Այս սենեակը , մէջտեղէն տախտակորմով երկու մասի բաժնուած է . առաջքին մասը սուրճ եփելու և այլ ծառայութեանց յատկացած է , իսկ ներքին մասը Տեաչին սենեակն է ։ Սորա վերայ կայ մի սենեակ Ուխտաւորաց յատկացեալ , որոյ դուռը սանդուխին միջավայրն է և ունի երեք պատուհան դէպ 'ի Ս . Գերեզմանը և պատուհանաց առջև մի պատշգամ՝ երկաթեայ վանդակաւ (3) ։

---

(3) Այս սենեակները յառաջ քան Ս . Յարութեան հրկիզումն եռայարկ էին և կ'ըսուէին եէնիչէրիաղասի օտասի . բայց երբ 1810ին Յոյնք շինեցին . միայն կրկնայարկի վերածեցին .

3°. ՎԵՐՆԱՏՈՒՆ. Ս. Յարութեան մէջ առանձին եկեղեցի է Հայոց ազգին սեպհական, ուր կ'ելնուի Տեառն սենեկին դրան քովի սանդուխէն։ Այս տեղ կը կատարէ Հայոց Միաբանութիւնը գիշերային և տուընջեան ժամերգութիւնք. ունի պատարագամատոյց կըրկին սեղաններ, Աւագ սեղանը յանուն խաչելութեան, երկրորդը՝ յանուն Երաշխաւոր Ս. Աստուածածնայ։

Աւագ խորանի աջակողմը կրկնայարկ մի սենեակ կայ, որ ունի երեք պատուհան, որոց երկուքը Աւագ խորանին վերայ կը նային, երրորդը՝ Ս. Գերեզմանին վերայ։ Այս տեղ կը բընակի Հայոց լուսարարը։

Եկեղեցին ունի եօթն պատուհան՝ Պատանատեղւոյն վրայ բացուած, չորսը Աւագ խորանի ետեւի կողմը դէպ 'ի արեւելք, երեքը Աստուածածնայ խորանի աջ կողմէն դէպ 'ի հիւսիս, և մէկ մեծ պատուհան՝ հարաւային կողմը, որ արտաքին գաւթին վերայ կը նայի։ Այս պատուհանին ներքեւն էր երկու պատուհանով սենեկի դուռը, զոր Յոյնք չինութեան առեն խանգա-

Digitized by Google

րեցին ։ Արեւելեան պատուհանայ դրսի կողմը պատերուն վերայ ունին Հայք երկու կանթեղ, մին մշտավառ, եւ պատկերներ . այս տեղ էին յառաջագոյն Հայոց սենեակները եւ պատրիարքարանը ։

Ս . Աստուածածնայ սեղանին ետեւը կայ մի դուռ, ուրկէ կը մտնուի մոմատունը, որ ունի մէկ պատուհան Պատանատեղւոյն վրայ և մէկ կրակարան . սորա մէջէն մէկ քանի աստիճանով վեր կ'ելնուի, ուր է սեղանատունը . ունի մէկ պատուհան Պատանատեղւոյն վրայ և մէկ մեծ պատուհան Ս . Յարութեան արտաքին գաւթին վրայ ։ Այս պատուհանին առջեւ կայ մի քիւ քարաշէն, ուր սանդխով կ'ելնուի և զոր Հայոց միաբանք կը գործածեն ։

Բաց 'ի այս ամենէն ունի Վերնատունը վեց կամար (1) Ս . Գերեզմանի վրայ, որոց իւրաքանչիւրին մէջ կան

(1) Այս կամարներուն մէջ սկզբան դուրս ելած բոլորաձեւ պատշգամներ էին երկաթեայ վանդակաւ, ուր ուխտաւորք կը կենային, բայց շինութեան ժամանակ Յոյնք խանգարած են ։

Digitized by Google

թեղաց շարաններ և առանձին կանթեղներ կան, որք կը վառուին ազգային եկեղեցական ամէն հանդէսներուն և օտարաց համար սահմանեալ հանդիսաւոր օրեր. կանթեղաց շարաններէն զատ առաջին կամարին մէջ կախուած են զանգակները, իսկ չորրորդին մէջ կոչնակները։

Վերնատան հարաւային կողմը կայ մի փոքր վերնատուն, ուր կը ննջեն Ս. Յարութեան Հայոց միաբանները։

Այս եկեղեցին Երկրորդ Գողգոթա ևս կ'ըսուի. որովհետև ըստ յիշատակարանաց՝ Մարտիրոս Պատրիարքը Վրաց հետ չը կարենալով գլուխ ելնել, որք 1422—1439 քանիցս Հայոց ձեռքէն յափշտակեցին Գողգոթան կաշառելով Եգիպտոսի Սուլթանները և մեծամեծները. ուստի յիշեալ Պատրիարքը Սուլթանէն այս տեղը խնդրեց և ստակով առաւ և յատուկ Եկեղեցի շինեց 1439ին և երկրորդ Գողգոթա անուանեց Գողգոթայի ճիշդ ու ճիշդ դիմացը լինելուն համար։

4°. ԻՒՂԱԲԵՐԻՑ ՍԵՂԱՆ. Ուժաթաւման տեղէն մի քանի ոտք դէպ 'ի աջ

կամարին տակոյն է այս սեղանը ։ Այս տեղ եկան Իւղաբեր կանայք միաշաբաթի առաւօտուն Յիսուսի մարմինը խնկելու ։ Այս սեղանին առջեւ ունին Հայք կանթեղաց մէկ շարան և մէկ առանձինն մշտավառ կանթեղ, նաեւ սեղանին (5) կից երեք պահարան և անկիւնը մի փոքր պատկեր ։

Սեղանին կից մեծ սիւնը, որ կայսերական ըսուած կամարին հարաւային ոտքն է և 18ր թիւը կը կրէ, Հայոց է. սեան վերայ ունին Ղազարու յարութեան մի մեծ պատկեր որոյ առջեւ կախուած է մի կանթեղ, սեան մէջ տեղը մի ուրիշ պատկեր ։

5°. ՅՈՎՍԷՓ ԱՐԻՄԱԹԵԱՑԻ. Ս. Գերեզմանի արեւմտեան կողմը Ղբտուց սեղանին (6) դիմացը դուռ մի կայ, որոյ

(5) Սոյն սեղանը նախկին ձեւովը չէ այժմ, որովհետեւ Յոյնք շինութեան ժամանակ ձեւը և դիրքը փոխած են տեղը նեղցնելով ։

(6) Այս սեղանը, որ Ս. Աւետարանին 'ի մօտոյ կոչուած տեղն է, յառաջագոյն Հայոցն եղած է ըստ Հաննէ վարդապետին, զոր Հեթում Բ. Թագաւորը շինել տուած է 1300ին, և զոր յետ ժամանակաց Ղբտուց տալով՝ նորա փոխարէն յԵգիպտոս ուրիշ եկեղեցի առած են ։

Digitized by Google

մէջ երեք խցի բաժնուած է. առաջի-
նը նախագաւիթ մի է, ուրկէ աստի-
ճաններով Հայոց ժամարար վարդապե-
տաց նշխարանը կ'ելնուի. սանդուխին
վարի կողմը կայ մի մեծ պահարան,
ուր կը զետեղեն Հայք գերեզմանի զար-
դարանաց տախտակները: Երկրորդ
խուցը մատուռ մի է յանուն Ս. Ա-
տուածածնայ, ուր Հայք Պատարագ
կը մատուցանեն, երբ ուզեն, եւ կը
պատարագեն Ասորիք՝ նոցա թոյլատուու-
թեամբ կիրակի օրերը, երբ Ս. Յարու-
թեան դուռը բաց գտնեն: Ասորւոց
պատարագի ժամանակն իսկ կանթեղ-
ները Հայոց իւղով կը վառուին. յետ
պատարագի սեղանին վրայ աշտանակ
կամ այլ ինչ զարդ թողլու իրաւունք
չունին, միայն այս խուցին մէջ Հայոց
տեսչաց թոյլատուութեամբ երեք փոք-
րիկ պատկեր կախուած են. մին հիւսի-
սային կողմը դրան վերայ. երկրորդը
սեղանին աջ կողմի պահարանին վերայ
և երրորդը Յովսէփայ գերեզմանին դը-
րան ճակատը: Այս մասին մէջ եղած
երկու պահարանները, ինչպէս նաեւ
Յովսէփայ գերեզմանին դրան ետեւի

Digitized by Google

պահարանը Աստրիք կը գործածեն ։

Յովսէփ Արեմաթացւոյն առաջին դրան վերայ երեք պատկեր ունին Հայք և դրան երկու կողման 8ք և 9ք սիւները, կամարը կանթեղաց շարանով և առանձինն կանթեղօք նոյն են, ինչպէս 7ք և 8ք սիւներուն միջեւ եղած կամարին՝ կէսն եւս կանթեղաց շարանով ։ Սիւներուն վերայ Սահակայ եւ Մեսրոպայ մեծ պատկերներ կախուած են առջեւնին առանձինն կանթեղներով ։ Ցուցնաց բաժնին մէջ 12ք զոյգ սիւնին մէջ տեղն եւս Հայք մի պատկեր ունին ։

Երրորդ խուցը ժայռի մը մէջ փորուած մութ տեղ մի է մի քանի մանր խորշերու բաժնուած . այս տեղ է Յովսէփ Արեմաթացւոյն գերեզմանը, և այս պատճառաւ այն երեք մասերը Յովսէփ Արեմաթացի կը կոչուին ։ Գերեզմանին վերայ ունին Հայք մի կանթեղ միշտավառ ։

6°. ՋՐՀՈՐ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՆ . Ս . Գերեզմանէն գրեթէ 12 մետր դէպ ՚ի հիւսիս Լատինաց տեղւոյն կից Մարիամ Մագդաղենացւոյ անուամբ, որ ըստ Հայոց պար-

տեղ[7] կը կոչուի ։ Պարտիզի կողմէն առաջին կամարէն հաշուելով՝ չորրորդ կամարն է Ջրհորոյն ճանապարհը ։ Կամարին արեւմտեան կողմը Հայոց է , արեւելեան կողմը Լատինաց , ուր իւրաքանչիւրն իրենց սանդուխները կը դնեն ։

Ջրհորը ազգային սեպհականութիւն էր , ինչպէս Հիճրէթի 923 թուականին Սուլթան Սէլիմի հրովարտակը կ'առանձնաշնորհէ . բայց վերջերս շատ կռիւներէ եւ վէճերէ զկնի ընկերովի իրաւանց կարգն անցած է ։ Ջրհորին հարաւային կողմը կայ եւ մի լուացարան, նոյնպէս ազգ. սեպհականութիւն,

(7) Պարտիզին վրայ երկու մշտավառ կանթեղ կան . մին Հայոց և միւսը Լատինաց . առաջ այս տեղը և երկու կանթեղները Հայոց էր . բայց 1631ին Պարոն տէր կոչեցեալ Գրիգոր Պատրիարքը կանթեղին մէկը , Պարտէզը եւ երգէհոնին կից եղած խուցը Լատինաց տալով նորա փոխարէն վերնատունէն երեք կամար առած է եւ Հայոց Եկեղեցին դէպ 'ի յերկայնութիւն ընդարձակած է ։ Լատինք 'ի յիշատակ այս փոխարինութեան Զատկի կիւրակէին , ինչպէս իրենց , նոյնպէս Հայոց կամարներուն մէջ զոյգ աշտանակներով մոմեր կը շարեն , հրամանաւ Հայոց Տեսչին ։

Digitized by Google

ուր երբեմն Հայոց միաբանութեան լա-
թերը կը լուացուէին : Լուացարանը
մութ սենեակ մի է, ունի վառարան
և դրան դիմացը երեք աւազան :

7°. ՀԱՆԴԵՐՁԻՑ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԵՂԱՆ ·
Պարտիզէ առաջին կամարէն մտնելով
եւ Մագդաղենացւոյ սեղանէն անցնե-
լով՝ եօթն կամարք Ս. Կուսին ըսուած կա-
մարազարդ հրապարակ մի կայ Յունաց
Աշխարհամատրան տաճարին շուրջը ·
այս հրապարակին մէջ կան զանազան
սեղաններ զանազան ազգաց : Փուշ մը-
ասկի հարաւային կողմէն մինչեւ Գուն-
կիոնոսի սեղանին Հիւսիսային կողմը
քառակուսի բարձրէն երկաթեայ շղթայ
մի կայ, որ կը պատկանի Հայոց և Յու-
նաց, և որոյ վերայ երկու ազգք կան-
թեղներ կը կախեն : Փուշ պսակի եւ
Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ դրան միջեւ-
պատին մէջ սիւն մի կայ · այս սիւնէն
մինչեւ Հանդերձից բաժանման սեղանի հիւ-
սիսային կողմը պատին մէջ եղած սիւ-
նը, որոյ ետեւը Յոյնք սենեակ ունին,
ամբողջ ազգ. սեպհականութիւն է հան-
դերձ հրապարակի այն մասին երկայ-
նութեամբ և ձեղունով : Այս բաժնին

մէջ է Հանդերձից բաժանման սեղանը ։ Այս տեղ դահիճները իրենց մէջ բաժնեցին Յիսուսի հանդերձները ։ Սեղանին առջեւ կայ մի շարան կանթեղաց եւ մէկ առանձինն մշտավառ կանթեղ ․ աջ եւ ձախ կողմերը սպառէն կախուած են Հայոց պատկերներ եւ պատին մէջ փորուած պահարաններ եւ մէկ աւազան ժամարարի լուացման ջուրը թափելու ։

8°. Ս․ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ․ Հանդերձից բաժանմանէն փոքր ինչ յառաջ երթալով դէպ 'ի հարաւ մի անփեղկ դուռ կը տեսնուի․ ատոր կ'իջնուի 29 աստիճանաւ Ս․ Լուսաւորիչ ազգ․ Եկեղեցին․ ունի կրկին․ սեղաններ առանձին դասով բաժնուած․ գըմբէթ՝ չորս մարմարեայ սիւնի վրայ․ Աւագ սեղանոյն արեւելեան հարաւային կողմը փոքրիկ պատուհան մի կայ, ուր կ'աղօթէր կ'ըսեն սուրբն Հեղինէ, երբ իւր հրամանաւ Խաչափայտը գըտնելու համար գետինը կը փորէին ։ Այս տեղն եւս Ազգ․ սեպհականութիւն է եւ կը վառին երեք մշտավառ կանթեղներ ։ Այս եկեղեցւոյ Ազգ․ սեպհա-

կանութեան սահմանը Գիւտ խաչ իջնելու սանդուխին (8) երկրորդ աստիճանն է, որոյ վերայ վերէն Լատինաց կանթեղը կախուած է։ Սանդուխին դէմացի հիւսիսակողման կիսապատը Հայոց է, ինչպէս նաեւ ՚ի Ս. Լուսաւորիչ իջնելու սանդուխին երկկողման վերնատունները և ներքնատունները. վերջինները իբրեւ իւղատուն և մթերանոց կը գործածուին։

9°. ՄԱՏՈՒՌ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ. Սուրբ Յարութեան տաճարին գաւթին արեւելեան կողմն՝ փոքրիկ, բայց պայծառ Եկեղեցի մի է երեք սեղանով. Աւագ սեղանն է յանուն Ս. Յովհաննու Աւետարանչին, աջակողմանը՝ Չարչարանաց եւ կապանաց. Քրիս-

(8) Աստիճանաց հարաւային կողմի պատին վրայ Լատինաց պատկերները կախուած են մինչեւ վերջին կամարը. իսկ հիւսիսային կողմը, որ Հայոց է, միայն Լատինական Գիւտ խաչի տօնին փարագոյններ կը կախեն Հայոց Տեսչի թոյլտուութեամբ։ Այս կիսապատին արեւմտեան ծայրը մի սիւն կայ, որոյ վերայ չորս պատկեր ունին Հայք, որոց երկուքը աստիճանաց վերայ կը նային. այս սիւնէն մինչեւ արեւելեան պատը տախտակ մի դրուած է, որոյ վերայ ունին նաեւ մէկ պատկեր և երկու ծաղիկ.

տանի, որովհետեւ կայ մի մասն այն սիւնին, յոր կապեցին զՅիսուս Կայիափայի տան մէջ. ձախակողմեանն է յանուն Հօրն Աբրահամու և զենման Իսահակայ: Երջանկայիշատակ Կիրակոս Պատրիարքի օրով 1849ին ներքին կողմը ամբողջ նորոգուած է:

Այն եկեղեցւոյ դրան դուրսի երկու կողման սէլթերը և տաջերը աւլելու իրաւունքը Հայոց է:

## ԳԼՈՒԽ Բ

## ԸՆԿԵՐՈՎԻ ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔ

Ա. Յարութեան Տաճարին մէջ Հայոց ազգին ունեցած ընկերովի սեպհականութիւնք և իրաւունք հետեւեալքըն են.

1°. ՏԱՃԱՐԻՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԵԾ ԴՈՒՌԸ. Մեծ դրան բանալիները Մահմետական դռնապանաց յանձնուած են, որք կը բանան և կը գոցեն, երբ Հայ, Յոյն և Լատին երեք ազգերէն մին բանալ ուզէ: Այս մասին վերջը աւելի մանրա-

Digitized by Google

մասն կը խօսինք ։ Ըստ աւանդութեան Նախնեաց՝ սոյն դուռը ամբողջովին Հայոց սեպհականութիւն էր եւ փոքր դռնակի բանալին եւս իրենց ձեռքն էր , որ վերջը Յունաց անցած է , զոր յարդունին ։ Իսկ ամբողջ դուռը բաժանորդութեան կարգն անցած է ։ Սակայն աւելի հաւանականն է , որ այս դրան կից՝ արեւելեան կողմի հիւսեալ դուռը Հայոց եղած լինի , երբ Գողգոթան իրենց ձեռքն էր ։ Յոյնք 1810 ին Տաճարը նորոգելու ատեն՝ Գողգոթան ընդարձակեցին երկու կանգնոյ չափ դէպ յարեւմուտս , որով փակեալ դրան ներքնակողմի մի մասը Յունաց Տեսչական սենեկին խառնուեցաւ եւ միւս մասին վրայ Լատինաց Տարածման տեղը ընելու աստիճաններ շինուեցան , որով խափանեցաւ նոյն դուռը։

2°. **ՊԱՏԱՆԱՏԵՂԻ**. Գրան դիմացն է և կարմրագոյն գեղեցիկ քառանկիւնի քարով մի ծածկուած ։ Սոյն տեղը որոշեալ սահմաններով մինչև արտաքին դուռը ընկերովի երեք ազգաց կը պատկանի ։ Երկու կողմերը Հայք , Յոյնք և Լատինք երկերկու զոյգ մեծադիր եւ

Digitized by Google

փոքրադիր աշտանակներ ունին կերպաներով ։ Քարին վրայօք խոշոր եւ միատեսակ ութն կանթեղներ մշտալոյս կը վառին, որոց երկուքը Հայոց, չորսը Յունաց և միւս երկուքին մին՝ Լատինաց եւ միւսն՝ Ղպտուոց են, ինչպէս կանթեղաց ստորին կողմը կախուած պղինձներուն վրայի գրերն եւս ցոյց կը տան ։ Հին ժամանակ այս սուրբ տեղը գեղեցիկ մուզայիքով զարդարուած էր ։

3°. Ս. ԳԵՐԵԶՄԱՆ ՓՐԿՉԻՆ. Իւղաբերից սեղանէն վեց մէտր դէպ 'ի հիւսիս. արեւմուտք Նորաշէն մեծ գմբէթի մի տակ և բոլորաձեւ միջավայրի մի կեդրոնն է Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. ԳԵՐԵԶՄԱՆԸ եւ ընդհանուր Քրիստոնէից երկրպագելի սուրբ վայրը ։

Ս. Գերեզմանը մինչեւ 1808ը մի քանի ձեւերու մտնելէն յետոյ՝ յիշեալ Թուականին հրկիզեցաւ Ս. Յարութեան Տաճարը, որով Գերեզմանն եւս քիչ շատ վնասուեցաւ, որ ատեն Բ. Դրան կողմէն Յունաց արտօնութիւն տրուեցաւ Տաճարը նորոգելու, որք

Digitized by Google

դրեթէ առանց ձեւը փոխելու Ս. Գերեզմանը մարմարեայ քարերով զարդարեցին յունական արձանագրութիւններով։ Հրդեհէն առաջ Ս. Գերեզմանի շրջապատին վերայ Հայերէն գրեր կային, ըստ վկայութեան ծերունի միաբանից։ Ս. Գերեզմանին դուռը դէպ յարեւելս կը նայի, դրան վրայ Յունաց մարմարեայ պատկերին անմիջապէս վարը Հայոց Յարութեան պատկերն է, որոյ առջեւ Լուսաւորչի անուամբ մի կանթեղ կախուած է։ Յունաց պատկերի վերին կողմը Լատինաց պատկերը եւ կանթեղը կախուած են։ Դրան ներս Գերեզմանին առաջին մասն է, որոյ կեդրոնը կանգուն կայ մարմարեայ սիւնաձեւ մի քար, որ Հրեշտակի վէմ կը կոչուի, ուր կանգնած էր Հրեշտակին մէկը սպիտակ հագած։ Այս մատուռին մէջ 15 մշտավառ կանթեղներ կան. Ձախ կողմի չորսը՝ Հայոցն է. և հինգերորդը՝ Ղպտւոց, միւս երկու շարաններէն միջինը՝ Լատինաց և աջ կողմինը՝ Յունաց են։ Արեւելեան պատին վրայ հարաւի կողմը, ունին նաև Հայք Յարութեան մի պատկեր. անմիջապէս

դրան վրայ է Յունաց մարմարանեայ պատկերը և անոր վերինկողմը Լատինաց պատկերը ։ Գերեզմանին տանիքը ելնելու դրանց , որք արտաքին դրան ներքին երկու կողմերն են , հարաւայնոյն բանալին հաւասար է Հայոց եւ Յունաց , իսկ հիւսիսայինը միայն Լատինաց յատկացեալ ։ Տանիքը իւրաքանչիւր ազգ առանձինն սնտուկ ունի ։

Այս մատուռին միջէն երկրորդ դռնէ մի կը մտնուի Ս. Գերեզմանը , որոյ մեծութիւնը թէ՛ լայնութեամբ և թէ՛ երկայնութեամբ երկու մէտրի չափ է ։ Ճրագապատին մարմարիոններուն տակը դեռ կը տեսնուին Գերեզմանի բնական ժայռ քարերը ։ 43 կանթեղ կը վառին մշտապէս , որոյ 13 ական հատը Հայոց , Յունաց և Լատինաց են , իսկ չորսը Ղպտւոց ։ Ամբողջ Գերեզմանը երեք մասն բաժնուած է ։ Մնարից կողմը Լատինացն է իրենց արծաթաձոյլ պատկերով , աշտանակներով և ծաղկամաններով . միջին մասը Յունաց՝ մարմարիոնէ քանդակուած Յարութեան պատկերով , որոյ առջեւ ունին 4 աշտանակ և մի ծաղկաման , մէջ

Digitized by Google

մէկ աշտանակ եւ սնարից և յանոտից կողմն ունին. Հայոց բաժինն է յանոտից կողմը, ուր ունին մի պատկեր Յարութեան, վեց աշտանակ և ծաղկամաններ։ Ս. Գերեզմանին մէջ կայ մի պահարան (9) առանց փականքի, ուր երեք ազգաց կողմէն կը դրուին Գերեզմանը մաքրելու քերիչ, աւել և այլն։ Երեք ազգաց մէյ մէկ աշտանակները մշտավառ են. Հայոց հանդիսաւոր Թափորներուն, Պատարագներուն և Հրաշափառի հանդէսներուն Յունաց եւ Լատինաց աշտանակներէն երկերկու զոյգ սկիզբէն ցվերջ կը վառին. մի և նոյն յարգանքը փոխադարձաբար Հայոց կողմէն նոցա հանդէսներուն կը տրուի։

4°. Ս. ԳԵՐԵԶՄԱՆԻ ԳԱՒԻԹԸ. Գերեզմանի արտաքին դրան առջեւի հրապարակն է, որ մինչեւ Յունաց տաճարի դուռը կը հասնի, և երից ազգաց ըն-

(9) Այս պահարանին առջեւ կը կանգնի Յունաց մոմավաճառ լուսարարը՝ երբ Ս. Յարութեան դուռը բաց լինի և ուրիշ ազգ Գերեզմանի վրայ արարողութիւն չ'ունենայ. Հայոց հանդիսի օրերն եւս մինչեւ դրան փակումը իրաւունք չ'ունի Գերեզմանը գալու։ Թէեւ Հայք 1820 ին աշխատած են այն իրաւանց ընկեր լինել, բայց չ'են յաջողած։

կերովի խաչունքն է։ Դրան արտաքին երկու կողմերը բարձրկեկ քարաշէն նստարանաձեւ սէլթեր շինուած են, որոց վերայ դրուած են երեք զոյգ միջակ մեծութեամբ աշտանակներ, առաջին կճեայ զոյգը՝ Յունաց է, երկրորդը՝ Հայոց, իսկ վերջինը՝ Լատինաց։ Նըստարաններու ծայրը եւս կայ Յունաց մի զոյգ կճեայ մեծ աշտանակ կերոնաբարձ, իսկ Հայոց և Լատինաց պղնձեայ մեծ աշտանակները դրուած են նստարանաց ետեւի կողմերը։

Հայք սոյն գաւիթը հանդիսաւոր և հասարակ օրերու Պատարագի ժամանակ փառօք կը տարածեն ըստ սովորութեան, ուր կը կենան Պատարագի սպասաւորող դպիրք եւ ժողովուրդք։ Յունաց երկփեղկեայ դուռը Հայոց և Լատինաց սովորական և հանդիսաւոր Պատարագներու ատեն միշտ գոց կը մնայ, որոյ առջեւ կը դրուի Հայոց պատրիարքական աթոռը։

5°. ՀՐԱՊԱՐԱԿ ՇՈՒՐՋ ԳԵՐԵԶՄԱՆԱՒ. Այս տեղ միայն Թափորներու և ժողովրդեան կենալու կը ծառայէ։ Երբ երեք ազգերը առանձին հանդէսներ

Digitized by Google

ունենան՝ բոլոր սոյն հրապարակը իրենց ժողովրդեան համար ազատօրէն կը գործածեն. իսկ Լուսաւորեայի հանդիսին, զոր Հայք և Յոյնք միասին կը կատարեն, Գերեզմանի հրապարակը երկու ազգաց կը բաժնուի կէս առ կէս. Յոյնք և իրենց դաւանակիցք Գերեզմանին հիւսիսային կողմը, իսկ Հայք և իւրեանց հետեւողք հարաւային կողմը: Գերեզմանի հարաւային եւ հիւսիսային արտաքին որմերուն վրայ երկու զոյգ կանթեղներ ունին Հայք և Յոյնք մէկ զոյգ. Այս վեց կանթեղները միայն գիշերները կը վառին եւ այն ժամանակ՝ երբ Հայք և Յոյնք Դրան պատարագ ունենան. իսկ կիրակմտին Գերեզմանի շըրջապատի տասն և ութն սիւներուն կանթեղները ամբողջ կը վառին:

## ԳԼՈՒԽ Գ

### ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԱՀԱՐՈՒԹԻՒՆՔ, ԽՆԿԱՐԿՈՒԹԻՒՆՔ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՔ ԵՒ Ս. ՊԱՏԱՐԱԳՔ

Բաց 'ի հանդիսաւոր և տէրունական օրերէն՝ կէս գիշերէն կէս ժամ

տուած Յունաց կոչնակը՝ նախ կը զարնուի, և անմիջապէս նոյն Սարկաւագը բոլոր Ս. Տեղիքը կը խնկարկէ (10) շապիկ հագած. Ճիշդ կէս գիշերին Լատինաց զանգակը կը հնչէ, որոյ կը յաջորդէ Հայոց կոչնակը։ Նոյն միջոցին Հայոց Սարկաւագը շապիկ հագած սաղաւարտ 'ի գլուխ Ուժաթափման տեղէն սկսեալ խնկարկելով կ'երթայ 'ի Ս. Գերեզման, որոյ դրան առջեւ երեք բուրվառ ընելէն զկնի գլխուն սաղաւարտը կը հանէ և կը դնէ դրսի նստարանաձեւ քարերուն վրայ և ապա կը մանէ ուղղակի Ս. Գերեզմանը (11), ուր հինը բուրվառ ընելով եւ համբուրելով՝ կ'ելնէ նախագաւիթը, և այնտեղ Հրեշտակի վիմին չորս կողմը երեքական անգամ խնկարկելով եւ համբուրելով՝ դուրս

---

(10) Ցոյնք արտաքոյ կարգի սովորութիւն ունին. որ իրենց Տօնի օրերը առաջին խնկարկութենէն զատ ժամերգութեան ժամանակ Սարկաւագը կրկին կը գայ 'ի Ս. Գերեզման և կը խնկարկէ, անտի Ուժաթափման տեղին. Պատանատեղին եւ ելնելով Գողգոթա և խնկարկելով այս տեղերը՝ կ'իջնէ իրենց տաճարը։

(11) Այս միջոցին եթէ ներսը ոք եւ է ազգէ ուխտաւոր կայ, 'ի նշան խնկարկու Սարկաւագին պարտաւոր է անմիջապէս դուրս ելնել։

Digitized by Google

կ'ելնէ , սաղաւարտը գլուխը կը դնէ , վերստին երիցս կը խնկարկէ դէպ 'ի Գերեզման , ապա կը դառնայ Յունաց Տաճարը , երիցս կը խնկարկէ և դարձեալ դառնալով դէպ 'ի Գերեզմանը կը խնկէ երիցս , և յետ այնորիկ կ'երթայ Ուժաթափման տեղը և յետ երիցս խնկարկելէն կ'անցնի Պատանատեղին , որոյ շուրջը խնկարկելով կը դառնայ Աղամայ մատուռը և խնկարկելով կ'ելնէ 'ի Գողգոթա , Խաչելութեան պատկերին իննը բուրվառ ընելով կ'անցնի Տարածման տեղը և Լատինաց սեղանները կը խնկարկէ . դառնալով Խաչելութեան պատկերին երիցս կը խնկարկէ և անտի կ'իջնէ ու կ'երթայ 'ի Փուշ պսակ , խնկարկելէն զկնի , կ'իջնէ 'ի Գիւտ խաչ և անտի կ'ելնէ 'ի Ս . Լուսաւորիչ , ուր կը խնկարկէ Լուսաւորչայ կրկին պատկերները եւ սեղանները . ապա կ'ելնէ Հանդերձից բաժանման սեղանը , խնկարկելով կ'անցնի Դ . Բանտը և անտի երթալով Լատինաց Եկեղեցին՝ (12) չորս կողմը կը

(12) Շատ անգամ կ'ըլլայ որ Հայոց Սարկաւագի խնկարկութեան միջոցին , Լատինք ժամերգութեան

խնկարկէ և կ'ելնէ Պարտէզը, Մագդաղենացւոյն սեղանին գետինը բոլորակ մի կայ, որոյ վրայ է Հայոց մշտավառ կանթեղը, Սարկաւագը այս բոլորակին չորս կողմը կը խնկէ եւ ապա սեղանը, ուրկէ Ս. Գերեզմանին հիւսիսային կողմը խնկելով՝ կ'անցնի Յովսէփ Արեմաթացւոյն գերեզմանը եւ անտի խնկարկութեամբ կ'երթայ վերստին Ս. Գերեզմանին դուռը, անտի դառնալով Ղազարու պատկերը և Իւղաբերից սեղանը խնկելով՝ կ'անցնի Ուժաթափման տեղին եւ խնկարկութիւնը կը վերջացնէ ու կ'ելնէ Վերնատունը (13), ուր ժամարար վարդապետը և ամբողջ միաբանութիւնը պատրաստուած կ'ըլլան և կ'ըսկսին գիշերային ժամերգութիւնը։

---

սկսած լինին. Սարկաւագն անխափան իրաւունք ունի խնկելու։

(13) Անկիզբէն ցվերջն Հայոց Սարկաւագին կը հետեւի և Ղպտուց Սարկաւագը, որ երբէք իրաւունք չունի առաջ անցնելու, ինչպէս և Հայոց Սարկաւագը չը կրնար յառաջ անցնիլ Յունաց Սարկաւագէն. Յետ աւարտման Ղպտուց սարկաւագին, կ'երթայ իրենց սենեակը և նոքա իրաւունք չ'ունին ժամերգութիւն կատարելու 'ի Ս. Յարութիւն։

Digitized by Google

Լատինք ամեն օր խնկարկելու սովորութիւն չ'ունին, այլ միայն Տօնի և Հանդիսաւոր օրերը ։ Խնկարկութենէ առաջ իրենց եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր ժամերգութիւն կը կատարեն յերեկոյ և յառաւօտ, և 'ի նշան խնկարկութեան, Գերեզմանի. դրան իրենց փոքր աշտանակներու մոմերը չեն վերցըներ, որով Յոյնք կ'իմանան թէ Լատինք Ս. Գերեզմանը պիտի խնկարկեն. ուստի եթէ երեկոյ է, կոչնակը չ'են զարներ, իսկ եթէ առաւօտ՝ պատարագի չեն սկսիր մինչեւ որ խնկարկութիւնը վերջանայ ։

Յոյնք գիշերային ժամերգութենէն զկնի 'ի ձայն կոչնակի պատարագի կ'ըսկըսին Ս. գերեզմանին (14) վրայ ։ Յետ աւարտման Ս. Պատարագին՝ երբ պատարագիչ քահանայն սկիհ 'ի ձեռին Գերեզմանէն դուրս կ'ելնէ իրենց եկեղեցին երթալու՝ Հայոց կոչնակահա-

(14) Յոյնք երբեմն, ինչպէս և Հայք, շատ անգամ գիշերուան պատարագէն զատ, ցերեկը դրան բացման պատարագ կ'ունենան, այս պատարագային մէջ առաջին պատարագին սկիզբը կոչնակ չ'են զարներ, այլ երկրորդին ։

բութիւնը կ'ըսկսի և երբ Յոյնք իրենց աշտանակը կը վերցնեն, զոր 'ի ժամ պատարագի Հրեշտակի վիմին վերայ կը դնեն, և յետ պատարագի՝ Գերեզմանի դուռը, մինչեւ որ իրենց սպասները վերցնեն. Հայք անմիջապէս իրենցը կը տանին և պատարագի պատարագատութիւնը կը տեսնեն:

Հասարակ օրերու Հայոց Պատարագի պատարագատութիւններն են, տախտակ՝ Գերեզմանին վրայ դնելու, որպէս զի բարձրանայ, ծածկոց, վէմ քար և կոփուրայ, ծածկոց Հրեշտակի վիմին և կոփուրայ, ուր սպաս կը դրուի. վարագոյր արտաքին դրան, տախտակ Հրեշտակի վիմին արևել. Հարաւային անկիւնը, եւ Հանդիսի օրերը արեւել. Հիւսիսային կողմը. որոյ վերայ կը դրուին բաժկի, Խաչ և Աւետարան և արտաքին գաւիթը պէտք եղածին չափ կը փռեն:

Այս ամենը պատարագէն զկնի կը վերցնեն և ինչպէս այն աշտանակը, որ պատարագի սկիզբէն ցվերջ Հրեշտակի վիմին վրայ կը վառի. որովհետեւ ինչպէս Հայք, Յունաց աշտանակի վեր-

ցուցլում, նոյնպէս Լատինք՝ Հայոց
աշտանակի վերցուելուն պարտաւոր
են սպասել։ Լատինք Հայոց վերջին ա-
ւետարանէն զկնի պատարագի վանկ կը
զարնեն. բայց եթէ Հայք և Յոյնք Դը-
րան պատարագ չ'ունենան, աւելի ուշ
կ'ըսկսին իրենց պատարագը, քանզի ա-
նոնցմէ վերջը ուրիշ պատարագող ազգ
չը կայ։

Երբեմն Հայք նաև Յոյնք, փոխա-
նակ Ս. Գերեզմանին, իրենց սեփա-
կան պատարագամատոյց սեղաններէն
միոյն վրայ կը պատարագեն։ Եթէ Ս.
Լուսաւորիչ կամ Վերնատունը և-
կամ Հանդերձից բաժանման սեղանը
պատարագեն, սկիզբն պատարագին
կոչնակ չեն զարներ, ըստ որում մի և
նոյն միջոցին Յոյնք ևս պատարագի
մէջ կ'ըլլան. այլ յետ պատարագի երբ
Գերեզմանին առջև ճաշու կ'ըսեն, այն
ժամանակ կը զարնեն. իսկ եթէ Յով-
սէփ Արիմաթացին կամ Իւղաբերից
սեղանը պատարագեն, ըստ որում Գե-
րեզմանին մօտ են, Յունաց պատարա-
գի վերջանալուն կ'սպասեն; և այնու-
հետև ըստ սովորականին նախ կոչնակ



Digitized by Google

կը դարնեն , Գերեզմանին դուռը ճաշու կ'ըսեն և այսօր Գերեզմանին վրայ դնելով՝ վերյիշատակեալ երկու սեղանոյ միջին վրայ կը պատարագեն ։

Յոյնք յետ պատարագին ելնէ Երկիրս ունին , մերթ Գերեզմանին դուռը և մերթ իրենց եկեղեցին կ'օրհնեն , սոյս փոխարէն Հայք եւս Գերեզմանին դուռը Հանգստեան քանելու և Աւետարան կարդալու իրաւունք ունին , որ 'ի գործ կը դնեն երբ ժողովուրդէն խնդրող լինի ։ Տէրունի օրերը ըստ Եկեղեցւոյ օրինաց Անդաստան եւս կ'ընեն ։ Աստուածածնայ օրը խաղող օրհնելու արարողութիւնը եւ Ս․ Ծննդեան օրը Ճրագատութեան խորհուրդը Գերեզմանին դուռը կը կատարեն ։ Երեք ազգերն եւս ձեռնադրութիւն ընելու հաւասար իրաւունք ունին ։

## ԳԼՈՒԽ Դ

### ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՓՕՐ

Երեկոյեան ժամերգութեանց համար առաջին անգամ՝ Լատինք իրենց

Digitized by Google

զա՛նգակը կը զարնեն մինչ կէս օրէն մէկ ժամ վերջը ։ Եթէ նախատօնակ ունին՝ Ս. Գերեզմանի դրան փոքր աշտանակներու մոմերը չեն վերցներ, որով Յոյնք իմանալով այս նշանէն, իրենց կոչնակը չեն զարներ, մինչև որ Լատինք Գերեզմանը խնկարկեն և դառնան ։ Երբ Լատինք Գերեզմանի գաւթի սատրիճանէն վար իջնեն, Յոյնք կոչնակը կը զարնեն, զոր Լատինաց նախատօնակ չունեցած օրերը, նոցա զանգակէն անմիջապէս յետոյ կը զարնեն ։ Յունաց Սարկաւագը գալով՝ Գերեզմանը կը խնկարկէ և գիշերուան կարգաւ կը շարունակէ. բայց երբ Ս. Գերեզմանէն դէպ ՚ի Ուժաթափման տեղը կ՚իջնէ, Հայոց կոչնակը կը զարնուի, և այնուհետև Հայ Սարկաւագը խնկարկութեան կ՚ելնէ, որոյ և կը հետևի Ղբտուոյը ։ Այն խնկարկութեան միջոցին Հայոց ժամարար վարդապետք և բոլոր միաբանք պատրաստուելով Վերնատան մէջ ժամերգութիւն կ՚ըսկսին, ինչպէս և Յոյնք ու Լատինք իրենց եկեղեցեաց մէջ ։

Ուրբաթ օրերը կոչնակ զարնուե-

Digitized by Google

լուն պէս Հայք և Յոյնք Պատանատեղ-ւոյն փոքր աշտանակներու մոմերը կը վառեն եւ կը մարեն երբ Ղբտուոյ սարկաւագը նոյն Ս. Տեղը խնկարկե-լէն զկնի Գողգոթայ կ'ելնէ ։

Շաբաթ օրերը՝ Գերեզմանի դրան փոքր աշտանակներու մոմերը կը վա-ռեն ։

Կէս օրէն երեք ժամ յետոյ Լատինք Թափորի զանգակ կը զարնեն (15) և յետ այնորիկ Յոյնք Եկեղեցի կոչնակ կը զար-նեն և ապա Հայք ։ Լատինք ամեն օր Թափորի սպարողութիւնը անխափան կը կատարեն. իսկ Հայք՝ Ուրբաթ, Շա-բաթ և Կիւրակի օրերը, և նաեւ Ուխ-տաւոր եկած օրերը ։ Երբ Յոյնք երե-կոյեան հանգէս ունենան, Հայք եւ Լատինք Թափորը առաւօտեան ժամը չորսին կը դառնան. եթէ Հայք երե-կոյեան հանգէս ունենան, նոյնպէս Լա-տինք առաւօտուն կը կատարեն Թա-փորը և փոխադարձաբար ։

---

(15) Այս ժամին Լատինաց և Յունաց միջեւ պայ-մանն մի կայ. որ Լատինք Զատկէն մինչեւ Յունաց Վերացման խաչի տօնը Թափորի կոչնակը առաջ զար-նեն, իսկ անկէ վերջը Յոյնք առաջ զարնեն ։

Digitized by Google

Ուրբաթ օրերը Լատինաց Թափորը Գողգոթայէն վար իջնալու մօտերը. Պատանատեղւոյն Հայոց և Լատինաց փոքր աշտանակներու մոմերը կը վառեն 'ի պատիւ Թաղման Քրիստոսի, և վառ կը մնան, մինչեւ որ Հայոց Թափորն ալ գայ և երթայ Գերեզմանին դուռը. Դիւրութեան համար մոմերը վառելու պաշտօնը Լատինաց լուսարարը կը կատարէ, իսկ մարելու պաշտօնը Հայոց լուսարարը.

Ուրբաթ, Շաբաթ և Կիւրակի երեկոյները երբ Լատինաց Թափորը Փոշպանէն կը մեկնի, Հայոց Թափորը Ուժաթափման տեղէն կ'ըսկսի այս եղանակաւ.

Խնկարկու Սարկաւագը շապիկ կը հագնի, գլուխը սաղաւարտ կը դնէ և ձեռքը տապանակ կ'ունենայ. Թափորապետ վարդապետը շուրջառ կ'առնէ, իսկ միւս վարդապետք փիլոն, և առհասարակ միւս Թափորականք տետրակ եւ վառած մոմեր կ'առնեն, այս եղանակաւ պատրաստուելէն զկնի՝ զոյգ առ զոյգ կը շարուին Ուժաթափման տեղին, ուր Սարկաւագը Ե— Ե—

խաղաղութեան կը ձայնէ, Թափօրապետն Օրհնութեան նոր փառք եւ այլն ըսելով՝ խունկ կը ձգէ և ապա Թափօրականք շարականասացութեամբ Ս. Գերեզմանի առջեւէն անցնելով կ'երթան Դ. Բանտը, Հանդերձից բաժանման տեղանը, Գիւտ խաչ ([16]), Ս. Լուսաւորիչ, Փուշպսակ, Գողգոթա, Պատանատեղի, Ս. Գերեզման եւ անկէ Հիւսիսային կողմէն դառնալով վերստին Ուժաթափման տեղին կը գան:

Այս ամեն Ս. Տեղերը շարական երգելով կ'երթան և իւրաքանչիւր տեղ Աւետարան և Աղօթքներ կը կարդան: Ուժաթափման տեղւոյն Աւետարանը և Աղօթքը կարդացուելէն զկնի, Թափօրապետը Հայր Մերով և Օրհնեալ Եղէրուժով կը կնքէ Թափօրը:

---

(16) Գիւտ խաչի տօնին և Դատաստանի կիւրակէին Շաբաթ երեկոյեան Թափօրներուն առեն ըստ կարգին Գիւտ խաչ չ'են իջներ, այլ Ուժաթափման տեղւոյն վրայ սովորական կարգը կատարելէն զկնի, կը շարունակեն Շարականի երգասացութիւնը և Պատանատեղւոյն, Հիւսիսային կողմէն ուղղակի անցնելով՝ կ'երթան 'ի Գիւտ խաչ, անտի Ս. Լուսաւորիչ կ'իջնեն, ուր ըստ պատշաճի արարողութենէ յետոյ կը վերջանայ Թափօրը:

Digitized by Google

Այս է ամէն սովորական Թափորներու կարգը, միայն Շաբաթականները և Աւետարանները տարբեր, և Նորէն Ուխտաւոր եղած ժամանակ Թափորի սովորական արարողութենէն զատ՝ Թափորապետը իւրաքանչիւր Ս. Տեղւոյն վրայ համառօտ ծանուցումներ կ'ընէ ի գիտութիւն բարեպաշտ Ուխտաւորաց։

Այս սովորական Թափորաց մէջ, բացառութիւնները, կարգը, Շաբաթականները, Աւետարանները և այլն, առանձին տպեալ տետրակի մէջ ամփոփուած են, որոյ անունն է Տերունի Տեղեաց Ձեռնատետր շրջանական Թափորաց։

## ԳԼՈՒԽ Ե

## ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Այն հանդէսները, զորս երեք ազգք միասին կը կատարեն, կամ երբեմն Հայք եւ Յոյնք միայն, երբ Լատինաց Զատիկը առաջ պատահի, Տարեկան հանդէսներ կ'ըսուին։

1°. ՄԵԾ ՊԱՀՈՑ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ. Ճա-

Digitized by Google

բաւթ երեկոյին Ս. Յարութեան դրան երկու փեղկերն եւս կը բացուին ընկերութեամբ. Յունաց Հրաշափառ հանդիսէն յետոյ ժամը իննէն առաջ Հայոց Աւագ լուսարարը կարգադրիչներու ձեռքով պատրաստել կը տայ Պատանատեղւոյն քով երկու զոյգ Աւետարանաբարձ քահանայներ, երեք խնկարկու սարկաւագք, երեք զոյգ մոմակալ դպիրք. եւ մէկ զոյգ քշոցաբարձք, որոց ձեռքը խաչ, փառազան եւ շուրջառ կը տրուի. Երկու զոյգ պարձեալ մոմակալք Հանդիսապետին առջեւէն քալելու համար եւ Թափօրական մեծ խաչ հանդիսին առջեւէն երթալու համար։ Այս ամենքը իրենց կարգին կը կենան Պատանատեղին. արդէն Ս. Յակոբայ մէջ ժամը ութին զանգ զարնուելով Ս. Պատրիարքը կամ Հանդիսադիր Եպիսկոպոս մը Հանդերձ միաբանութեամբ կ'երթայ ՚ի Ս. Յարութիւն. երբ դռնէն ներս մտնէն, Աւագ լուսարարը Հանդիսապետին՝ եթէ Պատրիարքն է, շուրջառ, խաչ եւ փառազան կը տայ, իսկ եթէ Եպիսկոպոս է՝ նոյն պաշտօնը կը կատարէ Աւագ Թարգմանը։

Digitized by Google

Նախասարկաւագը Եւ Եւս խաղա-ղութեան կը ձայնէ, Հանդիսապետը՝ Օրհ-նութիւն և փառք եայլն ըսելով խունկ կը ձգէ, յետ այնորիկ Դասապետը Հրա-շափառ Տարականը կ'ըսկսի, որոյ կը ձայ-նակցին բոլոր եկեղեցականք։ Սարկա-ւագները Հանդիսապետին խնկարկելով Գատանատեղւոյն կը մօտենան. Հանդի-սապետը գաւազանը Աւագ լուսարա-րին տալով Նախասարկաւագէն բուր-վառը կ'առնէ, կը խնկէ Գատանատե-ղին, աւետարանաբարձ քահանայները, ժողովուրդը, Գողգոթայն և վերստին Գատանատեղը. ապա Սարկաւագը կ'առնէ բուրվառը։ Հանդիսապետը փռուած գորգին վրայ ծնրադրելով կը համբուրէ Ս. Տեղը, և գաւազանը կ'առ-նու Աւագ Լուսարարէն. այնուհետեւ Թափորականք կը յառաջեն Ս. Գերեզ-մանի դուռը, և այն տեղ երկու կարգի վրայ կը շարուին մինչեւ Յունաց տա-ճարի երկփեղկեայ դուռը, որոյ առջեւ կը կենայ Թափորական խաչաբարձը։ Խնկարկու երկու սարկաւագունք Ս. Գե-րեզմանը խնկարկելով՝ կ'ելնեն Հրեշ-տակի վէմը կը խնկեն և ապա կ'երթան

Digitized by Google

խաչազարձին երկու կողմը կը կանգնին ։ Հանդիսապետը Ս. Գերեզմանը խնկելով եւ համբուրելով՝ կ'ելնէ Հրեշտակի վիմին առջեւ. հարաւային կողմը դրուած աթոռին վրայ կը բազմի. Թափօրական Վարդապետը և քահանայք զոյգ առ զոյգ երթալով Ս. Գերեզմանը և Հրեշտակի վէմը համբուրելով և Հանդիսապետին խոնարհելով կը դառնան իրենց տեղը ։

Այն արարողութենէն յետոյ Թափօրականք կը շարուին Գերեզմանին դէպ 'ի հիւսիսային հրապարակը և հանդարտաքայլ կը յառաջեն . երբ Հանդիսապետը կը մեկնի Գերեզմանի դըռնէն , Հայոց կոչնակը կ'ըսկսի եւ երբ Վերնատան սանդուխն կը մօտենայ , խնկարկու սարկաւագունք մէկ զոյգ մնալով կը մեկնին Ս. Տեղեաց խընկարկութիւնը ընելու . որովհետեւ այսօր Լատինք հանդիսաւոր Թափօր ունին , հարկ է որ նոցա Թափօրէն առաջ լինի խնկարկութիւնը ։

Թափօրականք կ'ելնեն 'ի Վերնատուն և այն տեղ կը կատարեն ժամերգութիւնը ։

Digitized by Google

Գիշերը Հայոց Գերեզմանի պատարագի միջոցին Ս. Յակոբեայ միաբանութիւնը գալով՝ զինի Պատարագին Վերնատան մէջ ժամերգութիւն եւ Պատարագ կ'ընեն, ինչպէս Յոյնք իրենց եկեղեցւոյ մէջ. յետ Պատարագին Յոյնք Գերեզմանին չուրջը Հանդիսաւոր Թափօր կը դառնան, որ կը վերջանայ Հայոց պատարագի աւարտին կամ առաջ. Առաւելըցի ատեն Թափօրապետը կ'ըզգեստաւորի, բոլոր վարդապետաց չուրջառ եւ մոմ կը տրուի, ինչպէս ամեն հանդիսաւոր Թափօրներու ատեն. Զկնի Ս. Պատարագին Ղարական երգելով Վերնատունէն կ'իջնեն, Ս. Գերեզմանի չուրջը երկիցս դառնալով՝ երրորդին Պատանատեղը կ'երթան, որոյ երկու կողմը Թափօրականք կը կանգնին, իսկ Հանդիսապետը Պատանատեղւոյն արեւելեան կողմը. այս տեղ սահմանեալ ընթերցումները ընելով՝ վերստին Թափօրը կ'երթայ Ս. Գերեզմանին դուռը, որոշեալ ընթերցումներէն զկնի, Գերեզմանի հիւսիսային կողմէն դառնալով կ'երթան 'ի Վերնատուն եւ այն

Digitized by Google

տեղ կը վերջանայ Թափօրը (17) ։

2°. ԾԱՂԿԱԶԱՐԴ. Ղազարու յարութեան Շաբաթ օրը ժամը 8ին 'ի Ս. Յակովբ զանկ զարնուելով՝ Հանդիսապետը հանդերձ միաբանութեամբ 'ի Ս. Յարութիւն կ'երթայ. Հրաշափառ հանդէս կը լինի նման Թէոդորոսի շաբաթ երեկոյեան հանդիսին և ժամերգութիւն 'ի Վերնատան։ Գիշերը ժամը իննին զանկ կը զարնուի Ս. Յակովբ և ժողովրդեան արմաւենիի ոստ (18) կը բաժնուի։ Գերեզմանի Պատարագները ըստ սովորութեան կը մատուցուին, ժամերգութիւն եւ Ս. Պատարագ 'ի Վերնատան եւ յետ Ս. Պատարագի Հանդիսաւոր Թափօր ըստ առաջնոյն զկնի Յունաց Թափօրին, բայց Թափօրականք մեծէն զատ արմաւենիի ոս-

---

(17) Ինչպէս այս, նոյնպէս հետեւեալ հանդիսից մանրամասն նկարագրութիւնը, ընթերցուածները, շարականները տես 'ի Տէփրոյ փոքրկան հանդիսից էջ 41—60 ։

(18) 1829 թուականէն առաջ արմաւենիի ոստերը Ս. Յարութեան մէջ Պատրիարքունք իւրենին կը բաժնէին ժողովրդեան։ Լատինք մինչեւ հիմա այս սովորութիւնը պահպանած են։

տեր ունին ։ Յետ երկիցս Ս. Գերեզմանի շուրջը դառնալոյ, երրորդին Դքսուց սեղանին հարաւային կողմը աթոռ կը դրուի, ուր Թափորապետը կը կենայ և նոյնպէս Թափորականք իրենց կարգին. սահմանեալ ընթերցումներէ ըզկնի, կը շարունակէ Թափորը կ'երթայ Պատանատեղը, եւ այնուհետեւ նախորդ հանդիսաւոր Թափորին նման շարունակելով կը վերջանայ 'ի Վերնատան ։

3°. ՀԱՆԴԻՍ ԼՈՒՍԱՒՈՐԵԱՑԻ ։ Այն հանդէսը Զատկի Ճրագալուցի օրը Ս. Յարութեան Տաճարին մէջ Հայք իրենց հետեւակներով Յունաց հետ կը կատարեն ։ Ժամը 4—5 Հայոց աւագ և երկրորդ Թարգմանները Ս. Յարութեան դուռը կ'երթան առ 'ի զգուշութիւն. որովհետեւ նոյն աւուր դուռը բանալու իրաւունքը առանձին Հայոց է ։ երբ դուռը կը բացուի, բոլոր ազգաց Ուխտաւորք խառն ներս կը մտնեն, բայց Պատանատեղւոյն քովէն կը զատուին ։ Հայք՝ Գերեզմանի հրապարակին հարաւային մասը կը բռնեն, մինչեւ Յունաց տաճարի դուռը, Յոյնք՝

Digitized by Google

հիւսիսային կողմը եւ իրենց տաճարը. Ասորիք՝ Յովսէփ Արեմաթացին ([19]) եւ Ղպտիք իրենց մատուռին առջեւ. այս միջոցին Տաճարին բոլոր կանթեղները մարած կ'ըլլան: Զինուորական տեսչութիւնը արթնութեամբ կը հսկէ առնչեալ տեղեր զինուոր կանգնեցնելով, որպէս զի երկու ազգաց ժողովուրդները իրարու չը խառնուին եւ շփոթութեանց տեղի տան:

Հայոց և Յունաց Ս. Պատրիարքունք կը գան իրենց եկեղեցականներով. Հայոց Պատրիարքը վերնատունը կ'ելնէ եւ առաջին կամարին մէջ կը բազմի: Ժամը 8ին միջոցները Հայոց մէկ Եպիսկոպոսը, Լուսահան վարդապետը եւ Թարգմանը Յունաց Պատրիարքին կ'երթան և օրը կը շնորհաւորեն: Այն միջոցին Ս. Գերեզմանի դուռը այլազգի

---

(19) Յովսէփ Արեմաթացւոյն երկրորդ յարկը, որ Հայոց ժամարարաց վարդապետաց և սարկաւագի նստարանն է, Մեծ պահոց վերջին շաբաթը Ասորւոց կը յանձնուի. որովհետեւ սոքա Հայոց հետեւակ լինելով և Ս. Յարութեան մէջ տեղ չ'ունենալով, Զատկական արարողութիւններէն չը զրկուելու համար Նախնիք այսպէս անօրինած են.

դռնապանք կը հնչեն ։ Երկու ազգաց փոխանորդք, Թարգմանք և Լուսարարք դրան առջև կը կանգնին. դրան վրայ կարգուած երիզին մէկ ծայրը Հայոց և միւսն Յունաց փոխանորդները կը բռնեն ։

Յոյնք երիցս Թափօր դառնալէն զկնի, նոցա Պատրիարքը կը գայ Ս. Գերեզմանին դուռը, որոյ անմիջապէս կը միանայ Հայոց Լուսարարը, և երկուքը տասներկուական անխառն մոմեր ՚ի ձեռին կը մտնեն ներս, որոց վրայ կրկին դուռը կը փակուի. Երկուքն ՚ի միասին Գերեզմանին մէջ համառօտ և լռին աղօթքէ մի զկնի, լուսաւորեալ մոմերով կ'ելնեն և անմիջապէս վառուած մոմերը դուրս կը տան՝ Հայոց Լուսարարը Հարաւային, իսկ Յունացը Հիւսիսային պատուհանէն ։ Հայք անմիջապէս Գերեզմանէն դուրս տրուած մոմը վերնատունը Ս. Պատրիարքին կը տանին և Յոյնք իրենց տաճարը. այնուհետեւ բոլոր Հայ և Յոյն ժողովուրդք իրենց ձեռքի պատրաստ մոմերը կը վառեն, ՚ի նշան Լուսաւորեալ Ս. Յարութեան Քրիստոսի, և այնուհետեւ Լուսարարք

բոլոր կանթեղները կը լուսեն։ Մի և նոյն ժամանակ Լուսահանք մոմերը դուրս տալէն զկնի վերար կ'ողջունեն Քրիստոս յարեաւ աւետելով և ապա Գերեզմանին դուռը կը բացուի. Ներս կը մտնեն երկու ազգաց փոխանորդք, Թարգմանք և Ղպտւոց ու Ասորւոց Լուսահանք. վերջինք իբրեւ հետեւակք Հայոց՝ իրենց մոմերը Հայոց Լուսահանի մոմէն կը վառեն. յետ այնորիկ Յունաց Լուսահան Պատրիարքը իրենց տաճարը, Հայոցը՝ Տեաչի սենեակը կ'երթան։

Հայոց եկեղեցականք Թափօրի կ'իջնեն շուրջառներով. Թափօրապետ կը լինի Լուսահան վարդապետը. երիցս դառնալով կը գան Ս. Գերեզմանի դուռը. Թափօրականք կարգաւ Գերեզմանը համբուրելէն զկնի, Աւետարան կը կարդացուի և սահմանեալ աղօթքներն կ'ըսուին. յետ այնորիկ Թափօրը կը մեկնի եւ Հայոց զոյգ կոչնակները կը զարնուին։ Ուխտաւորք եւ Միաբանք կը մեկնին 'ի Ս. Յակոբ, ջանկայողք կը մեան. որովհետեւ Լուսահանը Ս. Պատարագ կը մատուցանէ Վերնատունը։

## ԳԼՈՒԽ Զ

### ՀԱՅՈՑ ՀԱՆԴԻՍԻ ՕՐԵՐԸ

Տարւոյն շրջանին մէջ Հայոց հանդիսից թիւը վեցի բարձրացաւ 1829 թուականին (20) Ս. Գերեզմանի, Պատանատեղւոյն և այլ արարողութեանց մասին ըստ ամենայնի Յունաց և Լատինաց հաւասար լինելու համար ։ Այն հանդիսի օրերը, որք ՚ի ստորեւ մի առ մի գլխաւ ՚նշանակուին, Տաճարի արտաքին դրան երկու փեղկերը Հայք առանձին իրենք բանալ կը տան ։

1°. Ս. ԶԱՏԿԻ ԱՌԱՒՕՏ (21). Ըստ սո-

---

(20) Տե՛ս Դատաւորի Հէօճէթի և Իկամ և Նոցա առջանմողրութեան համեմատ Սուլթան Մահմուտի նորոգած և հաստատած կրկին Հրովարտակները, 1844—40 ։

(21) Այն օրը Յոյնք յառաջագոյն Ս. Գերեզմանի պատարագը և Թափորը կանուխ կ՚ընէին և իրենց եկեղեցւոյ մէջ Զատկի հանդիսաւոր պատարագը կըկնէին և ընդհանուր սովորութեան՝ իրենց Տաճարի դուռը բաց կը թողուին, որով երկու ազգաց մէջ վէճ և հակառակութիւններ կը լինէին. Հայք կը պնդէին, որ դուռը փակեն, ՚որպէս զի Թափորի ելնեն. Յոյնք կ՚ընդդիմանային. այս պատճառաւ վերջին տարիներս Յոյնք իրենց հանդիսաւոր պատարագը Գերեզմանին



Digitized by Google

վերութեան Զատկի կիւրակէի գիշերը ժամը մէկին 'ի Ս. Յակոբ զանգ կը զարնուի. Ս. Պատրիարքը, Միաբանութիւնը և Ուխտաւորք 'ի Ս. Յարութիւն կ'երթան, ժամերգութիւնը Վերնատունը կ'ըսկսին. Ս. Պատրիարքը զգեստաւորեալ, Եպիսկոպոսք, Վարդապետք և Քահանայք շուրջառաւ, խաչիւ և մոմով, Սարկաւագունք և Դպիրք շապիկ հագած կը պատրաստուին: Հայոց ժամանակ սկսելով Հայրը՝ վար կ'իջնեն, Ս. Գերեզմանի դռնէն անցնելով՝ շուրջը կը դառնան, երկրորդ դարձին Ղբուոյ մատուռին քով Սարկաւագը Եկեղեցւոյ ու-ջնէջեան քարոզը կ'ըսէ, Թափօրապետը՝ Հզօր յաղթող աղօթքը. և ապա Մեծացուցէք շարականը երգելով՝ Թափօրականք կ'երթան Ս. Գերեզմանին դուռը կը շարուին սովորական կարգաւ. Թափօրապետը ներս մտնելով Հրեշտակի վէմին քով՝ աթոռի վրայ կը բազմի: Վանսուրբ փեղոյս քարոզէն մինչև Ողորմեա

---

վրայ սկսած մատուցանել. որով Հայոց Հանդէսը փոքր ինչ սկսաւ յետաձգիլ առաջնոյն նկատմամբ: Լատինաց Զատիկը միասին լինի կամ ոչ, Գերեզմանի պատարագը և հանդէսը միշտ Հայերէն վերջը կ'ընեն.

Digitized by Google

ժամերգութիւնը կը կատարեն. Ողորմեայի շարականը սկսելով՝ վերստին կը դառնան Գերեզմանի շուրջը. Դրսուց մատուռէն մէկ քիչ անդին Թափօրապետը պատրաստուած աթոռին վրայ կը բազմի. Տէր Երկնիցէն մինչեւ անդաստանի վերջը այն տեղ կը կատարեն. բայց Տէր Երկնիցի վերջին տունը երգելու ժամանակ, Եպիսկոպոսք, Վարդապետք և Քահանայք զոյգ զոյգ երթալով Թափօրապետին աջը կը համբուրեն, ապա զիրեար կ'ողջունեն աւետելով՝ Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց: Անդաստանէն վերջը Յիսուս Ծածին շարականը երգելով Պատանատեղը կ'երթան հանդարտաքայլ, ուր ոլոշեալ պաշտօնը կատարելով կը դառնան Գերեզմանին դուռը և անոր հիւսիսային կողմէն Թափօրը կ'անցնին և կ'ելնեն Վերնատունը և ժամերգութիւնը կը վերջացնեն: Անմիջապէս զոյգ կոչնակները կը զարնուին, Գերեզմանի դուռը ձողով կ'ըսկսին, Պատարագիչը, որ կամ Ս. Պատրիարքը և կամ Եպիսկոպոս մի կը լինի, Տեաչի սենեակը կ'ըզգեստաւորի և սուրբ պատարագը Գե-

րեզմանին վրայ կը մատչի ([22]) ։

Ղեւոնդք և Ատոմք իբրեւ հետեւակք Հայոց՝ այս աւուր Թափորին ետեւն կը շրջին եկեղեցական զգեստիւք ։

2°. ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԷ ․ Շաբաթ երեկոյեան Հրաշափառի հանդէսը նման է Թէոդորոսի շաբաթ երեկոյի հանդիսին ։ Երեկոյեան և գիշերուան ժամերգութիւնք Վերնատան մէջ կ՚ըլլան և կիւրակէ առաւօտուն Ս․ Գերեզմանին վրայ հանդիսաւոր պատարագ կը մատչի ։

3°. ՎԱՐԱԳԱՅ Ս․ ԽԱՉ ․ Այս աւուր հանդէսը յար և նման է Աշխարհամատրան կիւրակէի հանդիսին , միայն աւուր պատշաճական սաղմունքներով և ընթերցմունքներով կը զանազանի ։

4°. ԳԻՒՏ ԽԱՉ ․ Շաբաթ օրը Լատինաց հասարակ Թափորէն զկնի , Հայոց

---

(22) Ուրիշ հանդիսի օրեր , որ Գերեզմանի վրայ առաւօտուն հանդիսաւոր պատարագ կը մատուցանեն Հայք , գիշերները պատարագ չ՚ունին , ուստի գիշերները Յունաց պատարագէն անմիջապէս վերջը Լատինք կը պատարագեն ։

Digitized by Google

լուսարարը Լատինաց լուսարարին իմացնելով՝ աշտանակով վառուած կերոն մի կը դնէ Գիւտ խաչի տեղը, որ Լատինաց սեպհականն է և կը մնայ մինչեւ դրան փակուիլը կիւրակէ երեկոյ։ Հրաշափառի հանդիսով Լատինաց եկեղեցւոյ առջեւէն անցնելով՝ Ս. Լուսաւորիչ եկեղեցին կ'իջնեն և այն տեղ կը կատարեն երեկոյեան և առաւօտեան ժամերգութիւնք։ Հարցին սկիզբը Լուսարարապետը Կենաց փայտի մասն պարունակող Խաչը զոյգ մոմակալով կը տանի և Գիւտ խաչի տեղւոյն վերայ կը դնէ և Ո[illegible] տունը երեք անգամ կը կրկնեն և բուրվառիչներ անդամին զոյգ խնկարկու Սարկաւագունք սեղանը խնկելէն զկնի կ'իջնեն Գիւտ խաչն եւս կը խնկեն. յետ այնորիկ Լուսարարապետը կրկին կը վերցնէ խաչը։

Հանդիսաւոր Ս. Պատարագ կը մատչի 'ի Ս. Լուսաւորիչ, ապա Ս. Կարապետի սեղանը կը դրուի, ուրկէ Սարկաւագը առնելով վերաբերումի ժամանակ՝ հանդիսիւ Գիւտ խաչ կ'իջնէ, և այն տեղ դնելով նոյն անգամ կը խընկարկէ և ապա համբուրելով նոյն սուրբ

Տեղը, սկիհը կ'առնէ և վեր կ'ելնէ. Առաջնոյն ժամանակ Լուսարարապետը կենաց փայտի մասն պարունակող սուրբ Խաչը, վերատին Գիւտ խաչի տեղը կը դնէ երկու փոքր աշտանակով. ուր Թափորապետը զկնի պատարագին Եպիսկոպոսներով մէկտեղ լծնելով և Աւետարան կարդալով կ'առնու սուրբ Խաչը և Թափորական հանդիսիւ կ'ելնէ և Ս. Գերեզմանին շուրջը Թափորի հանդէսը կը կատարուի և կը վերջանայ 'ի Ս. Լուսաւորիչ, (տես 'ի Տարեկան տետրակ էջ 10—30։

5°. ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆ. Սուրբ Ծննդեան ութերորդ օրը կը կատարուի այս Տօնը. սոյն օրը առաւօտեան ժամերգութիւնը 'ի Ս. Յակոբ կը լինի. յետ ժամերգութեան Ս. Պատրիարքը, կամ' պատարագիչ Եպիսկոպոսը հանդերձ Միաբանութեամբ և Ուխտաւորօք Ս. Յարութիւն կ'երթայ։ Հրաշափառի հանդէսը Պատանատեղէն սկսելով սովորական հանդէսներու համեմատ դէպ 'ի Գերեզման կը յառաջանան. Երբ Թափորապետը սիւներուն մէջ տեղը կը հասնի, Դասապետը՝ Ո-

որ էր Ս. Էջմիածնի Տաճարն կ'ընկնի. իսկ երբ Թափորապետը Գերեզմանին դուռը կը հասնի, առանց ներս մտնելու սովորական կարգը կը կատարէ և յետ այնորիկ Լոյս 'ի լուսոյ Տաճարականի երգասացութեամբ Գերեզմանի հիւսիսային կողմէն կ'երթան Տեսչի սենեակը, ուր դրան առջեւ Պահպանիչով կը կնքէ հանդէսը : Այն միջոցին զոյգ կոչնակը կը զարնուին, Գերեզմանին դուռը ճաշու կ'ըսկսին, Պատարագիչը Տեսչի սենեկին մէջ կ'զգեստաւորի և հանդիսաւոր Ս. Պատարագ կը մատչի Ս. Գերեզմանին վրայ :

6°: ԴԱՏԱՒՈՐԻ ԿԻՒՐԱԿԷ. Շաբաթ օրը ժամը 8ին Ս. Յակոբեայ վանքը կը զարնուի. Ս. Պատրիարքը, Միաբանք եւ Ուխտաւորք Ս. Յարութիւն կ'երթան. Հրաշափառի հանդէսը նման է Գիւտ խաչի շաբաթ երեկոյեան հանդիսին :

Երեկոյեան և առաւօտեան ժամերգութիւնք Ս. Լուսաւորիչ եկեղեցին կը կատարուին. յետ առաւօտեան ժամերգութեան Ս. Գերեզմանի դուռը ճաշու կ'ըսուի եւ հանդիսաւոր պատարագ կը մատչի ու մեծահանդէս

Թափոր կը լինի։ (Տե՛ս ՚ի Տարեկան տետրակ էջ 60—79)։ Այս օրուան պատարագիչը անպատճառ Ս. Պատրիարքը կը լինի։

# ԳԼՈՒԽ Է

## ԶԱՐԴԱՐԱՆՔ ԵՒ ԱՒԵԼԱԾՈՒԹԻՒՆ

1°. ԶԱՐԴԱՐԱՆՔ. Քրիստոսի Ս. Գերեզմանը երկու կերպով կը զարդարուի։

Ա. Երբ հանդէսը առանձին մէկ ազգի լինի, Գերեզմանի ամբողջ ճակատը կը զարդարէ ըստ կամի պատկերօք, կանթեղօք և մոմեղինօք. իսկ շրջանակը և փոքր գմբէթը որոշեալ՝ տեղեր՝ առանց այլոց իրաւանց դպչելու։ Հայք այս եղանակաւ կը զարդարեն Ս. Գերեզմանը Վարագայ և Գիւտ խաչի տօներուն եւ Քրիստոսի անուանակոչութեան օրը. Վարագայ խաչէն մինչեւ Գիւտ խաչի օրը Հայոց զարդարանքը կը մնայ Գերեզմանին ճակատը, որովհետեւ այս միջոցին ուրիշ ազգ հանդէս չ՚ունի։ Յոյնք կը զարդարեն Հոգեգալստեան, Վերացման խաչին եւ

Digitized by Google

Մկրտութեան օրը. իսկ Լատինք Տօն Հաղորդութեան օրը։

Բ. Տարեկան հանդէսներուն երեք ազգք ընկերութեամբ կը զարդարեն Ս. Գերեզմանը Մեծ պահոց առաջին շաբթուն և իւրաքանչիւր ազգի զարդարման տեղը սահմանեալ է. Գերեզմանի հարաւային կողմը Հայք, միջին տեղը Լատինք, իսկ հիւսիսային կողմը Յոյնք կը զարդարեն եւ զարդարանքը մինչեւ Աշխարհամատրան կիրակէն կը մնայ։ Եթէ Լատինաց Զատիկը առաջ պատահի և երեք ազգաց Տեսուչները համաձայնին, Նոյն Մեծ պահոց առաջին օրէն երեք ազգք 'ի միասին կը զարդարեն. իսկ եթէ անհամաձայն լինին, Լատինք առանձին կը զարդարեն մինչեւ երկուց ազգաց մեծ պահոց սկիզբը, որ ժամանակ Լատինք իրենց զարդարանաց 2/3 մասը կը վերցնեն, որպէս զի Հայք և Յոյնք եւս զարդարեն. երբ զատկի տօնը կատարեն 1/3 մասը եւս կը վերցնեն բաց 'ի տախտակներէն, որոց վրայ Հայք եւ Յոյնք ընկերութեամբ իրենց զարդերը կը շարեն։

Digitized by Google

Գերեզմանին վերին շրջապատը երեսուն և երեք պատկերներ կը դնեն իբրեւ զարդ, իւրաքանչիւր ազգ տասն և մէկական հատ։ Իւրաքանչիւր ազգ իւր պատկերաց առջեւ նոյն թուով մոմակալ աշտանակներ կը դնէ այն ձեւով, որ նոյն աշտանակաց վրայ մէյ մէկ մոմ կը դրուին, և երկերկու կամ երեքական եւս կանթեղ կը կախուին։ Փոքր գմբէթի կամարաց մէջ երեքական կանթեղներ կը կախուին մէն մի ազգի կողմանէ մէկ հատ. կամարաց թուոյն համեմատ կանթեղաց բովանդակ թիւն է երեսուն և վեց։ Գմբէթի գօտիին վրայ 36 աշտանակներ կը դրուին, որոց իւրաքանչիւրին վրայ մէկ մոմ կը դրուի եւ մէկ կանթեղ կը կախուի վարի կողմէն։ Իսկ գմբէթի կեդրոնէն կախուած երեք կանթեղները, որ երեք ազգաց կը պատկանին, միայն հանդիսի օրերը կը վառին։

2°. ԱՒԵԼԱԾՈՒԹԻՒՆ. Ընկերովի տեղերուն աւելածութիւնը և լուանալով մաքրելը, երեք գլխաւոր ազգաց սեպհական է եւ շաբաթական կարգաւ կը կատարեն։ Ուրբաթ օրէն սկսեալ Հայք

ութ օր ամբողջ Ս. Գերեզմանը, դաւիթը և շրջապատ հրապարակը լուալու եւ աւելածելու իրաւունք ունին. յաջորդ ուրբաթէն Գերեզմանի աւելածութիւնը ուրիշ ազգաց կ'անցնի, Պատանաստեղին լուալու կարգը Հայք կ'ըսկսին և լուանալէն զկնի պատուակը տարածեն, և այս շրջանը պարբերաբար կը դառնայ: Բայց յաստի տարին մի անգամ ընդհանուր աւելածութիւն կը լինի, որ Մեծ աւել կ'ըսուի. այն օրը իւրաքանչիւր ազգ իրեն սեպհական տեղերը կը մաքրէ, իսկ ընկերովի տեղեաց մաքրութիւնը միասին կը կատարեն: Ուժաթափման տեղը ամէն ուրբաթ Հայք լուանալէն զկնի պատտառ կը տարածեն:

Մնացեալ տեղերը, որ ազգին որ կը պատկանին ամէն ուրբաթ օր սրբելու, եւ մաքրելու պարտաւոր են եւ այս աւելածութեան զանգակը հնչելուն պէս Տեսուչը, ժամարար վարդապետը, Սարկաւագը բոլոր միաբանք աւելներ առնելով կ'ըսկսին աւելածել. իսկ լուարարք լուալու կ'ըզբաղին:

# ԳԼՈՒԽ Ը

## Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԴՈՒՌԸ ԲԱՆԱԼ ԵՒ ՓԱԿԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ

Ս. Յարութեան դուռը երեք ազգ միայն, այն է Հայք, Յոյնք ու Լատինք բանալու և փակելու իրաւունք ունին։ Այս մասին երեք ազգերն ալ նշանի փոքրիկ զանգակներ ունին ու մէկ հատ ալ Ղպտիք։ Երեք ազգերէն որը որ դուռ բանալ ուզէ, նախ անոր զանգակը կը քաշուի և ապա միւսներունը կարգաւ. օրինակի համար եթէ Հայք դուռը բանալ ուզեն, նախ նոցա զանգակը կը քաշուի, ապա Լատինաց, Յունաց եւ Ղպտւոց զանգակները. եթէ Լատինք լինին դուռ բացողը, առաջ նոցա, վերջը Յունաց, Հայոց և Ղպտւոց զանգակները կը քաշուին. իսկ եթէ Յոյնք բանալ ուզեն, առաջ նոցա, ապա Լատինաց, Հայոց եւ Ղպտւոց զանգակները։

Ղպտիք դուռ բանալու իրաւունք չունին, եթէ գործ ունենան, Հայոց Տեսչին կը դիմեն եւ կը խնդրեն, որ դուռ բանալ տայ։

Digitized by Google

Ա. Ցարուժեան դուռը կը բացուի հետեւեալ պատճառներով ։

ա. Եթէ գործ պատահի, կամ նորեկ Ուխտաւորք լինին ։

բ. Եթէ ցերեկը յատուկ պատարագ ունենան երեք ազգերէն մին ։

գ. Եթէ հանդիսաւոր պատարագ, Թափոր կամ Հրաշափառի հանդէս ունենայ երեք ազգերէն մին ։

Առաջին պատճառաւ բացուած դըռան համար, որ Հասսարան դուռ կ'ըսուի, հարիւր տասն փարայ կը տրուի դռնապան մահմէտականաց, սուրճ ու կրակ եւս կը տրուի, եթէ երկար ժամանակ բաց մնայ դուռը ։

Երկրորդ պատճառաւ բացուած դըռան համար, որ Պապարագէ դուռ կ'ըսուի, 10, 5 ղուրուշ կը տրուի դռնապանաց, նաեւ մէկ մոմ, հաց, պանիր, սուրճ, եւայլն ։

Երրորդ պատճառով բացուած դըռան համար, որ Հոնդրխասոր դուռ կ'ըսուի, 45 ղուրուշ կը տրուի ։ Միայն Գաղատեան կիւրակէի դուռը, զոր Հայք Ղեւոնդ համար կը բանան, 25 ղուրուշով կը բացուի ։

Երեք ազգերը մէյ մէկ յատկացեալ մարդ ունին, որ Երկրորդ Թարգման (իքինճի) կ'ըսուին. Երբ Ս. Յարութեան դուռը բացուի, անոնց լուր կը տրուի Ազդարարին միջոցաւ, որ գալով դրան քով կը գտնուին բացումէն մինչև փակումը։ Ազդարարը Յոյն է և կը բնակի Յունաց Հայր Աբրահամու վանքը. միշտ զգոյշ ու արթուն մնալու պարտաւոր է, որ երբ դրան բացումը ազդարարուի, անմիջապէս երթայ դռնապանաց լուր տայ. այս պատճառաւ բաժնակից է նոյն ստացած դրամին։

Հայք, կամ Յոյնք երբ պատարագի դուռ ունենան, իրիկունէ միմեանց; ինչպէս և Լատինաց լուր կը տան, որպէս զի Ս. Գերեզմանին վրայ գիշերային մատուցանելիք պատարագները սակաւ մինչ կանուխ մատուցուին, որ ժողովրդոյ Գերեզմանը ընելիք ուխտին արգել չը լինի։

Հայոց ցերեկուան պատարագի ժամանակ Գերեզմանի արտաքին պատէն կախուած Յունաց երկու կանթեղները վառ կը մնան, ինչպէս եւ Յունաց պատարագի ժամանակ Հայոց նոյն տե-

զի չորս կանթեղները ։

Հայք և Յոյնք եթէ մի և նոյն օրը պատարագի դուռ ունենան. Յոյնք կը բանան, Հայք կը գոցեն ։

## ԳԼՈՒԽ Թ

### ԵՐԻՑ ԱԶԳԱՑ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

Հայոց Հրաշափառի և Թափորի ամէն հանդէսներուն Յոյնք եւ Լատինք թէ Պատանատեղւոյն եւ թէ Ս. Գերեզմանին իրենց աշտանակները կը բանան եւ կը վառեն ։ Պատանատեղւոյն արեւելեան երեք մեծ աշտանակները Յոյնք կը վառեն ՚ի դիւրութիւն, արեւմտեան երկուք մեծերը Լատինք. իսկ երեք զոյգ փոքր աշտանակները Հայք ։ Բայց յատուկ Յոյնք նաեւ իրենց ստորին կամարաց շարանները կը վառեն, իսկ Լատինք Զատկական հանդիսից, այսինքն մեծ պահոց առաջին շաբաթէն մինչեւ Աշխարհամատրան կիւրակէի հանդէսներուն իրենց թէ ստորին և թէ վերին շարանները կը վառեն. Գիւտ

խաչի հանդիսին միայն վարի շարանները. Վարագայ խաչին և Ծննդեան ութօրէից հանդէսներուն շարանները վառելու կը զլանան ։

Ասոր փոխարէն Հայք եւս Յունաց հետեւեալ հանդէսներուն, այն է Մը-կրտութեան հանդիսին յունվար 6 ին, որ Հայոց Ծննդեան ութօրէից հանդէսին փոխարէն է, Պատանատեղւոյն և Ս. Գերեզմանի դրան մեծ և փոքր աշտանակներուն շապիկները կը հանեն եւ մոմերը կը վառեն, նոյնպէս վարի շարանները։ Մեծ պահոց առաջին շաբաթու հանդիսին թէ՛ երեկոյին և թէ՛ առաւօտուն միայն աշտանակներու մոմերը կը վառեն, Քրիստոսի Թաղման հանդիսին թէ՛ մոմերը եւ թէ՛ բոլոր կանթեղները. Նոր կիւրակէի հանդիսի շաբաթ երեկոյին եւ Հոգեգալըստեան օրը եկած ատեննին միայն աշտանակաց մոմերը. Վերացման խաչի հանդիսին, որոյ փոխարէն է Հայոց Գիւտ խաչի հանդէսը, կը վառեն Հայք վարի շարանները, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ ճանապարհին վրայի կանթեղները եւ Պատանատեղւոյն ու

Ս. Գերեզմանի դրան աշտանակաց մոմերը։

Լատինաց Մեծ պահոց առաջին և երկրորդ շաբաթու երեկոները հանդիսից առեն Հայք և Յոյնք կը վառեն Պատանատեղւոյն եւ Ս. Գերեզմանի դրան աշտանակաց մոմերը, նոյնպէս վարի եւ վերի շուրանները. Ծաղկազարդի երեկոյին թէ հանդիսէ և թէ Թափորէ ետքը առեննին Հայք կը վառեն մոմերը. իսկ Կիւրակէ առաւօտ Թափորի ատեն թէ մոմերը և թէ կըրկին շուրանները, Աւագ շաբաթու հանդիսին թէև աշտանակները կը բանան, բայց վառելու սովորութիւն չունին։ Աւագ հինգշաբթու հանդիսի Թափորին Հայք և Յոյնք միայն Գերեզմանին և Պատանատեղւոյն աշտանակաց մոմերը վառելու սովորութիւն ունին, Աւագ ուրբաթը Գերեզմանի դրան մոմերը կը վառեն, ուրբաթ երեկոյին Թափորէ Խաչելութեան արարողութիւնը կատարելու ժամանակ Հանդերձից բաժանման Ճանապարհին վրայի կանթեղները, Ս. Գերեզմանի և Պատանատեղւոյն մոմերը կը վառեն թէ Հայք և



Digitized by Google

թէ՛ Յոյնք. Գիւտ խաչի հանդիսին, զոր Ապրիլ 21 ին կը կատարեն, Հայք եւ Յոյնք աշտանակաց շապիկները հանելով մոմերը կը վառեն, բայց շարանները վառելու սովորութիւն չունին, եթէ զատկական հանդիսից չըպատահի. ինչպէս որ Հայոց Վարագայ խաչի հանդիսին եւս Լատինք շարան չեն վառեր: Մարիամայ և Արեան Տեառն տօնին, որ Հայոց Գիւտ խաչի հանդիսին փոխարէն է, Հայք Գերեզմանի և Պատանատեղւոյն մոմերը և վարի շարանները կը վառեն, ինչպէս որ Լատինք եւս Հայոց Գիւտ խաչին՝ վարի շարանները կը վառեն: Վերացման խաչին, զոր կը կատարեն Սեպտեմբեր 2 ին, երբ Ս. Գերեզմանի դրան առջեւէն անցնելով՝ իրենց վիճակը կ'երթան, այն միջոցին Հայք և Յոյնք միայն Գերեզմանի դրան մոմերը կը վառեն:

Լատինք իրենց Ծաղկազարդի եւ Զատկի կիւրակէի թափօրներէն զատ, միւս հանդիսաւոր թափօրները փոխանակ կիւրակէի առաւօտները կատարելու միշտ շաբաթ երեկոյները կը կատարեն: Եթէ Զատիկը Հայոց Զատ-

կին հետ լինի, Մեծ պահոց առաջին շաբաթ երեկոյին երեք ազգք միասին կ'երթան Ս. Յարութիւն, բայց նախ Լատինք, ապա Յոյնք և վերջը Հայք։ Մեծ պահոց երկրորդ շաբաթը, որ է Անառակին, միայն Լատինք հանդէս կը կատարեն, երրորդ շաբաթը, կամ Տնտեսին, Յոյնք, Դատաւորին՝ Հայք. հինգերորդ կիւրակէն, կամ Գալստեան, Հայք Ղպտւոց համար յատուկ դուռ կը բանան. Ծաղկազարդին երեք ազգք միասին կը կատարեն հանդէսը առաջին շաբաթուան կարգաւ։

Եթէ Լատինաց Ծաղկազարդը Մեծ պահոց երկրորդ կիւրակէն պատահի, ըստ որում երեք ազգերն ևս հանդէս ունին, գիշերուան պատարագներն սովորական կարգաւ են, զկնի պատարագաց Լատինք Թափորի կ'ելնեն, ապա Յոյնք, վերջը Հայք։ Եթէ Ծաղկազարդը Անառակի կիւրակէն պատահի, Զատիկն ևս Տնտեսի կիւրակէն կը լինի, և որովհետեւ Տնտեսի կիւրակէն Յոյնք ցերեկը հանդիսաւոր պատարագ ունին Ս. Գերեզմանին վրայ և Թափոր, ուստի հանդիսաւոր պատարագը Թէ-

Digitized by Google

ողորոմի կիւրակէն կը մատուցանեն , որպէս զի Տնտեսի կիւրակէն Լատինաց հանդիսաւոր պատարագէն առաջ կարող ըլլան իրենց եկեղեցւոյ մէջ ժամերգութիւն ընելու և պատարագ մատուցանելու , որ ժամանակ Լատինք եւս Ս. Գերեզմանի դրան առաջ զատկական արարողութիւնն ու Թափօրի հանդէսը կը կատարեն . Յոյնք իրենց Թափօրը Լատինաց պատարագէն եւ Թափօրէն վերջը կ'ընեն։ Եթէ Ծաղկազարդը Տնտեսի կիւրակէն , որով Զատիկն եւս Դատաւորի կիւրակէն պատահի, գիշերուան սովորական պատարագը նախ Յոյնք կը մատուցանեն Ս. Գերեզմանին վերայ , յետոյ Լատինք . Հայք ժամերգութիւնը Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ կ'ընեն , հանդիսաւոր պատարագ Գերեզմանին վրայ և Թափօր. վերջը Լատինք Ս. Գերեզմանին դուռը շարժական սեղան կը կազմեն և հանդիսաւոր պատարագ ու Թափօր կ'ընեն։ Իսկ եթէ Ծաղկազարդը Դատաւորի կիւրակէն պատահի, գիշերը նախ Յոյնք կը պատարագեն , ապա Լատինք Գերեզմանի դուռը շարժական սեղան կը

կազմէն, Թէ կը պատարագեն, հանդիսիւ Թափոր կ՚ընեն և ապա ձայնաւոր պատարագ կը մատուցանեն եւ յետ այնորիկ Հայք հանդիսաւոր պատարագ մատուցանելով ՚ի Թափոր կ՚ելնեն ։

Digitized by Google

# ՄԱՍՆ Բ

## ԳԵՐԵԶՄԱՆ
## ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՑ

ԳԵԹՍԵՄԱՆԻ ձորին հիւսիսային ծայրը կ'ելնայ սուրբ Կուսին փառաւոր շիրիմը։ Ս. Տեղեաց շինութեան ատեն այս Եկեղեցին կրկնայարկ շինուած էր, բայց այժմ՝ վերին յարկը խսպառ քանդուած ու ջնջուած է և եղած է ժամանակ որ բոլորովին աւերակ ու անտէրունջ մնացած է. սակայն երբ Պաղեստին խաղաղացած է, երեք ազգը, Հայք, Յոյնք և Լատինք ընկերութեամբ ժառանգած են, և այս միջոցին Լատինաց լուսարարը Տաճարին որմին վրայ եղած Հայկական արձանագրութիւնները անհետացուցած է։ Յոյնք 1758 Թուին Տէրութեան Հրովարտակաւ Լատինները արտաքսեցին,

ինչպէս և Հայերը․ բայց մէկ տարիէն յետոյ Հայք մեծ աշխատութեամբ Յունաց անիրաւութեան դէմ յաջողեցան իրենց կորուսած իրաւունքը ձեռք բերել։ Ս. Գերեզմանը, որ ժայռի մը մէջ փորուած է, դրսի կողմէն տաշելով՝ միայն սուրբ Մարմինը ընդունած մասը թողուցած են, որոյ չորս կողմը պարապ է, ու կը գտնուի Եկեղեցւոյ արեւելեան թեւին մէջ, ըստ որում Տաճարը խաչաձեւ է։ Հիճրէթի 1228 թուականին Սուլթան Մահմուտի շնորհած կրկին Հրովարտակներով Հայք ու Յոյնք հաւասար ընկեր եղած են ամբողջ Տաճարին կանթեղօք, պատկերօք, վարագուրաւ և այլ ամենայն իրօք։

# ԳԼՈՒԽ Ա.

## ԱԶԳԱՅԻՆ ՍԵՊՀԱԿԱՆ ՏԵՂԻՔ Ի Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ Հայոց սեպհական տեղերն են․

1°. Ս. ՅՈՎՍԷՓԱՅ ԳԻՐԵԶՄԱՆ. Սոյն մատուռը, որ Տաճարը իջնելու 43 աս-

ախճանէ սանդուխին մէջ տեղը՝ արեւմըտեան կողմն է, պատին մէջ առանձինն կամարով պատարագամատոյց սեղան մի է ։ Կամարին երկու կողմը ունին Հայք երկու պղնձեայ մեծ աշտանակներ . կամարին ճակտի դիմացը ձեղունէն կախուած պղնձեայ մի ջահ, հինգ կանթեղաց շարան, փարագոյր սեղանի, սեղանին դիմացը մէկ երկաթեայ աշտանակ, մէկ մշտավառ կանթեղ ու երկու պատկեր, իսկ սեղանէն կամարին հարաւային կողմը երկու կանթեղ, մին Յունաց ։

2°. ՏԵՍՉԻ ՍԵՆԵԱԿ . Սանդուխին արեւմտեան ծայրն՝ է Հայոց Տեսչին սենեակը, որոյ մէջ կայ նաեւ մի պահարան ։ Այս սենեկի դրան վրայ ունին Հայք երկու պատկեր և առընթեր դըրանն է բազմոց (սէթ) որոյ վրայ կան երկու ծոպրուխ, մին Հայոց եւ միւսը Յունաց ։

3°. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՒ . Այն մասը ամբողջ Հայոց սեպհական է, ուր կայ մի սեղան յանուն Ընծայման . շրջապատ որմոց առջեւ գլեասուց, զարդուց և այլ կահուց սպահարաններ դրուած են ։

Սեղանին առջեւ մշտավառ կանթեղ մի կայ եւ շարան կանթեղաց, որմերուն վրայ պատկերներ եւ մեկ ժամացոյց. Տեսչի սենեկին քովէն մինչեւ ժամացոյցը՝ պատը վարագուրաւ ծածկուած է։ Այս տեղ շաբաթը երկու օր, այն է չորեքշաբթի և ուրբաթ օրերը Ղըպտիք կըպատարագեն թոյլտուութեամբ Հայոց։

4°. ԱԽԱԳ ՍԵՂԱՆ. Ս. Գերեզմանին արեւմտեան պատին կից դրան կողմն է, զոր շինած է Հեթում Բ. Ռուբինեաց թագաւորը 1300ին, երբ Եգիպտացւոց վրայ արշաւանք ընելով յաղթութեամբ յետ դարձաւ։ Այս սեղանին առջեւ կայ մի արծաթեայ մշտավառ կանթեղ։ Ձախակողմի պատը Հայոց է, զոր վարագուրաւ ծածկած են. վարագուրի կիսէն վեր համաչափ պատկերներ շարուած են, պատկերաց վերի կողմը տախտակեայ քիւ է, որոյ վրայ նոյնպէս ծայրէ 'ի ծայր պատկերներ դրուած են. մէն մի պատկերի առջեւ պղնձեայ աշտանակներ կան, որոյ ըստորին կողմէն կանթեղներ կը կախուին հանդիսի օրերը։ Սորա փոխարէն աջա-

կողմի որմն եւս Յունաց է յար և նման Հայոց, այսինքն վարագուրաւ ծածկըւած, քիւրին ստորին և վերին կողմերը պատկերներ, աշտանակներ ու կանթեղներ կան։

5°. ՍԵՂԱՆ Ս. ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍԻ ԵՒ ԹԱԴԷՈՍԻ. Սուրբ Գերեզմանի Հիւսիսային կողմն է, ուր շաբաթը մէկ և երբեմն ալ երկու անգամ, այն է չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը Ասորիք կը պատարագեն Հայոց թոյլտուութեամբ։ Այն տեղւոյն կիտակամարը վարագուրաւ ծածկուած է. սեղանին կից վարագուրին վրայ պատկեր մի կայ և վարագուրին տակ գրակալ կը դնեն Հայք և գրակալին քով մի գամ զարնուած է սպասին երկու ազգաց սահմանը որոշելու համար։ Հիւսիսային որմին առջև երկաթեայ երկու մեծ և փոքր աշտանակներ կը դնեն Հայք, ինչպէս և անկիւնը ունին մէկ նստարան, որոյ ետեւը որմին վրայ երկու գամով օղակ մի հաստատուած է մոմկանց մոմեր դնելու համար։ Սեղանին առջեւ կայ նոյնպէս փոքր մէկ ջահ և հինգ կանթեղաց շարան։

Digitized by Google

# ԳԼՈՒԽ Բ

## ԸՆԿԵՐՈՎԻ ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔ

Ա. Աստուածածնայ տաճարը թէև գրեթէ հաւասար բաժնուած է ընդ մէջ Հայոց և Յունաց, բայց ազգ. սեպհականութիւնքն առանձինն նշանակելէն զկնի, որոց իւրաքանչիւրին փոխարէն Յոյնք եւս առանձինն ու յատկացեալ սեղաններ և տեղեր ունին, հարկ կը համարինք բացորոշ կերպով նշանակել նոյնպէս ընկերովի գործածութեան մէջ եղած տեղերն։

1°. Արտաքին գաւիթ. Այս տեղ անծածք է և կ'իջնուի կրկին սանդուխներով, զորս Հայք և Յոյնք քանիցս նորոգած են. նոյնպէս արեւելեան պատը երկու ազգ. միասին շինած են սահմանեալ բարձրութեամբ. անկէ վեր Լատինք շինած են., ըստ որում ետեւի կողմը թէև լեցուած, նոցա է և վրան հրապարակ։

2°. Ս. ԳԵՐԵԶՄԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՑ. Եկեղեցւոյ արեւելեան թեւուն մէջն է.

ներքին կողմը կոկուած ու զարդարուած
է և ճերմակ մարմարիոնով ծածկուած,
բարձր դիրքով ու սեղանաձեւ, ուր ա-
մեն օր կը պատարագեն Հայք և Յոյնք։
Գերեզմանի միջին կողմը երկու հաւա-
սար մասի բաժնուած է, հիւսիսայինը
Հայոց և հարաւայինը Յունաց. իւրա-
քանչիւր ազգ իրեն բաժնի որմերը վա-
րագուրաւ ծածկած է. Հայք ունին
մշտավառ կանթեղաց երեք շարան, ո-
րոց երկուքը հնգակեան կանթեղօք, ու
երրորդն գերեզմանի գմբեթի լուսա-
մուտէն կախուած՝ երեք կանթեղօք է։
Հայոց կանթեղաց թուով Յոյնք ևս
ունին, բայց երկու շարանի վերայ, իւ-
րաքանչիւր ազգի պատարագէն՝ միւս
ազգին մէկ աշտանակը վառ պիտի մնայ.
Յետ պատարագայ Գերեզմանին առ-
ջեւ կը դրուին մէն մի ազգի կողմանէ
մէյ մէկ մոմի թօռլօմպայ, որ շարունակ
կը վառին։ Գերեզմանին ճակատը իւրա-
քանչիւր ազգի բաժնին մէջ կան երե-
քական աշտանակ և ծաղկամաններ և
ճակտի կեդրոնէն իւրաքանչիւր ազգ
կախած է մէն մի ուրար, որոց ուղ-
ղութեամբ պարապ կը մնայ, ուր իւ-

րաքանչիւր ազգ պատարագելու ատեն իւր պատկերը կը դնէ և յետ պատարագին կը վերցնէ ։ Գերեզմանը ունի երկու փոքրիկ դուռ վարագուրաւ, մին 'ի հիւսիս և միւսը դէպ յարեւմուտք կը նային. առաջինը Հայոց, երկրորդը Յունաց է ։ Արեւմտեան կողմը նայող դրան վրայ ունին Հայք մի պատկեր Վերափոխման և առջեւը մի մշտավառ կանթեղ. հիւսիսային դրան վերայ երկու պատկեր կան, մին Հայոց և միւսը Յունաց և երկու կանթեղ երկու ազգաց ։ Այս երկու կանթեղաց արեւելեան կողմն ևս կան երկու կանթեղ երկու ազգաց ։ Հայոց պատկերին քով ջղոց կախելու երկաթեայ երկու գամ հաստատուած են ։ Արեւմտեան դրան վրայի փոքր պատկերի սահմանէն սկըսեալ Գերեզմանի հիւսիսային որմի արտաքին երեսին վարագոյրը և որմը մինչեւ արեւելեան կողմը որմին կէսը Հայոց են. այս տեղ դրուած սանդուխը ընկերովի է ։

Գերեզմանին գմբէթին վրայ տասն և վեց աշտանակ կայ՝ ութն Հայոց և ութն Յունաց. երեսուներկու հաս

կանթեղ ու մոմ դնելու մեծ աշտանակներ, տասնեվեցը Հայոց և տասնեվեցը Յունաց. գմբէթին գլուխը եօթն մամի տեղ կայ, երեքն Հայոց և չորսը Յունաց։

3°. ՏԵՂ. ՁԳԵՍՏԱՒՈՐԵԼՈՒ. Գերեզմանին հարաւային կողմն է, ուր Հայոց ժամարարը կըզգեստաւորուի. կայ այս տեղ մի աւազան, ուր կը թափուի ժամարարի լուացման ջուրը։ Այն աւազանին քով բուրվառ կախելու երկու գամ վարնուած են և աւազանին վերայ երեք գամ, մին գերեզմանի արեւմտեան դրան առջևի շարանին ջուանը անցնելու, երկրորդը՝ նոյն ջուանին մնացորդը փաթթելու. իսկ երրորդը մի և նոյն տեղւոյն Հայոց առանձին կանթեղին համար։ Արևելեան կիճապատին վրայ մի գամ, ուր մոմ կը փակցուի՝ խորհրդատետրին լոյս տալու համար. գամ մի ևս Գերեզմանին որմին վրայ, ժամարարին վեղարը կախելու համար։ Այս տեղւոյն հիւսիսային կողմը, ուր որ գերեզմանի պատն է, տախտակեայ նստարան է, որոյ տակ կը դնեն Հայք փոխանթ, որ ժամարարի զգես-

տաւորելու ատեն ոտքին տակ կը փըռուի, և մէկ փոքրիկ դրակալ՝ խորհըրդատետրին համար. Նստարաններն արեւելեան ծայրը ժամարարին օճառի պընակը կը դրուի։

4°. **ՏԱՃԱՐԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԴՈՒՌԸ**. Երբ 1758ին Յոյնք անիրաւութեամբ Հայերը դուրս ձգեցին, այն դրան բանալին եւս առին. մէկ տարի վերջը Տէրութիւնը հրովարտակաւ Յունաց յափշտակածները յետ վերադարձուց։ Այժմ մէկ բանալի Հայք եւ մէկ ալ Յոյնք ունին և անարգել իւրաքանչիւր ազգ ուզած ատենը կարող է բանալ ու գոցել։

5°. **ԼՈՒՍԱՐԱՐԻ ՆՆՋԱՐԱՆ**. Երբ արտաքին դռնէն ներս մտնես երկու կողմերը որմից առջեւ նստարաններ եւ Լուսարարաց անկողնոյ տախտակներ կան. ձախ կողմի թէ՛ նստարանը և թէ՛ վրան պառկելու տախտակը Հայոցն է. իսկ աջ կողմինը Յունաց։ Սանդուխին վերի առաջին աստիճանէն ինն աստիճան վար մոմավաճառաց երկու պահարաններ կան դէմ առ դէմ. ձախ կողմինը Հայոց, իսկ աջ կողմինը Յունաց է։

6°. ՋՐՀՈՐ. Ջրհորը Տաճարին արեւմտեան թեւին առջեւն է. առաջ Հայոց էր, բայց վերջը երկու ազգաց ընկերովի սեպհականութեան կարգն անցած է. պղնձեայ երկու դոյլ (պարխած) կայ հորին վրայ, մին Հայոց և միւսն Յունաց։ Որովհետեւ սոյն հորին ջուրը խմելու չէ, այլ անձրեւով կը լեցուի, ուստի երբ ջուրը կը պակսի, կարգաւ մի անգամ՝ Հայք և միւս անգամ՝ Յոյնք կը լեցնեն դուրսը իրենց կալուածոց մէջ եղած հորերէն քաշելով։ Հորին ուղղութեամբ մի քանի քայլ դէպ 'ի հիւսիս չորս աթոռ դրուած են պատին առջեւ, որոց երկուքը, այն է հորին կողմինները՝ Հայոց, միւս երկուքը Յունաց։ Սոյն աթոռներուն ուղղութեամբ անկիւնը դրուած են Հայոց երեք եռոտանիները, մէկ սանդուխը և Յունաց երկու եռոտանիները. նոյնպէս կանթեղներ մարելու երկու հովհարներ, մին Հայոց և միւսն Յունաց. Ջահերն ու մոմերը վառելու երկու եղէգ ու երկու երկայն աւելներ, որոց մին Հայոց և միւսն Յունաց է։

7°. ԿԱՆԹԵՂՆԵՐ ՇԱՐԱՆՆԵՐ ԵՒ ՋԱՀԵՐ.

Digitized by Google

Տաճարը իջնելու սանդուխին գլուխէն մինչեւ Տեաշի սենեկին դուռը վեց կանթեղ ունին Հայք, որոց չուաններուն գամերը սուրբ Յովսէփայ կողմի որմին վրայ հաստատուած են. աղա փոխարէն Յոյնք եւս ունին, որոց չուաններուն գամերն ալ Յովակիմ Աննայի (23) կողման որմին վերայ հաստատուած են։ Արեւելեան թեւին մէջ Հայոց Աւագ սեղանին առջեւ կայ մի շղթայ Հայոց սեպհական, որոյ վրայ վեց կանթեղ կախուած են, երեքը Հայոց՝ ու երեքը Յունաց։ Այն շղթային համահաւասար երկրորդ շղթայ մի եւս կայ գրեթէ կամարին միացած, այս եւս Հայոց է, բայց վրան կանթեղ չըկայ։ Այս կըղկին շղթաներէն զատ Աւագ սեղանին առջեւ երկու շարան կայ խրագու մոմ, արեւմտեանը Հայոց, իսկ արեւելեանը՝ Յունաց։ Այս թեւին հիւս. եւ հարա.

---

(23) Ս. Յովսէփայ Հայոց սեղանին դիմացը փոքրիկ մատուռ մը է, ուր Յովակիմ եւ Աննայի գերեզմանները կան. Յոյնք այս սեղանին առջեւ ունին երկու մեծ աշտանակներ. հինգ կանթեղք շարան. մէկ առանձին կանթեղ. մի պղնձեայ ջահ, որ կամարին կեդրոնէն կախուած է։



Digitized by Google

կողմերը Աւագ սեղանի առջեւի չարաններէն սկսեալ մինչեւ Թեւին բերանը եղած չարանները մէկ մէկ կարգ ինանական կանթեղներ կան ; որոց չորսականը՝ Հայոց, և հինգականը՝ Յունաց են. բայց կարգերէն դուրս դէպ 'ի որմերը մէյ մէկ կանթեղ եւս ունին Հայք։ Նոյնպէս Եկեղեցւոյ չորս Թեւերուն առջեւ մէյ մէկ զոյգ չարաններ կան. արեւելեան կողմի զոյգ չարանաց արեւմտեանը, հիւսիսային կողմի չարաններէն՝ հիւսիսայինը, արեւմտեան չարաններէն՝ արեւմտեանը, իսկ հարաւային կողման զոյգ չարանէն՝ հարաւայինը Հայոց են, միւսները Յունաց։

Արեւելեան Թեւին մէջ ձեղունէն կախուած երեք ջահեր կան մէկ կարգի վրայ, երկու ծայրի փոքր ջահերը Հայոց են եւ անոնց միջեւ եղած մեծ ջահը՝ Յունաց։ Կանթեղներով երեք ջահ եւս Եկեղեցւոյ մէջ տեղը կայ, որոց երկուքը Հայոց է և մին Յունաց. այս ջահերուն ետեւն եւս Յոյնք ունին մէկ մեծ ջահ, որոյ շուրջը ունին Հայք վեց կանթեղ ձեղունէն կախուած և Յոյնք եօթն կանթեղ.

Digitized by Google

# ԳԼՈՒԽ Գ

## ՊԱՏԱՐԱԳԵԼՈՒ ԿԱՐԳ ԵՒ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Սուրբ Աստուածածնայ գերեզմանին վրայ ամէն օր Հայք և Յոյնք կը պատարագեն, բայց նախ Յոյնք և վերջը Հայք։ Պատարագի ժամերը թէեւ սահմանուած են իրաւախոհութեամբ երկու ազգաց, բայց եղանակին և ժամանակին համեմատ կը փոխուին. ամառը Յոյնք կանուխ աւարտելով իրենց պատարագը՝ Հայք եւս անմիջապէս ճաշու կ'ըսկսին և պատարագն եւս մատուցանելով մինչեւ ժամը մէկէն երկուք կ'աւարտեն. իսկ ձմեռը թէ՛ ուշ լուսնալուն և թէ՛ Ուխտաւորաց բազմութեան պատճառաւ, հազիւ Հայք չորսէն հինգ կ'աւարտեն։

Հանապազօրեայ պատարագներէն զատ Հայք Աստուածածնայ հետեւեալ տօներուն, Աւետման, Վերափոխման, Ծննդեան Ս. Աստուածածնայ ՚ի յԱննայէ, Յղութեան և Ընծայման, Հրաշափառի հանդէս կ'ընեն և հանդիսաւոր պատարագ կը մատուցանեն։

Digitized by Google

1°. ԱՐԵՏՈՒՄՆ. Նոյն օրը Յունաց պատարագէն զկնի բոլոր կանթեղնե֊րը (²⁴) կը վառեն թէ՛ Հայոց և թէ՛ Յու֊նաց. այս միջոցին սանդուխներուն վե֊րին գլուխը Հրաշափառի հանդիսին պատրաստութիւնները կը տեսնուին այն կերպով, որ նկարագրուած է Ա. Մասին մէջ. յետ այնորիկ կ'ազդարա֊րուի պատրաստութիւնը Հանդիսա֊պետ Պատրիարքին կամ Եպիսկոպոսին, որ Միաբանութեամբ հանդերձ վերը Հայոց Ջիթաստանի մէջ կ'ըլլայ. ան֊միջապէս կը գան Ս. Տաճարը. մի քանի աստիճան վար գորգ փռուած կ'ըլլայ, ուր գալով Հանդիսապետն շուրջառ կ'զգենու և խաչ ու գաւազան կ'առ֊նէ. Այս տեղ Հանդիսապետի գալէն առաջ 'ի պատիւ կըկենան Հայոց եւ

(24) Ազգի մը հանդիսին օրը միւս ազգին կան֊թեղները, աշտանակները եւ կամ ջահերը վառել սահմանեալ չէ, այլ երկու ազգաց համաձայնութե֊նէն կամ միմեանց հետ սիրով վարուելէն կախումն ունի. ուստի եթէ Յոյնք. Հայոց հանդէսներուն վա֊ռեն. Հայք եւս կը պարտաւորին նոցա հանդէսնե֊րուն 'ի պատիւ իրենց կանթեղները վառել. իսկ ե֊թէ հակառակութեամբ կեցան, ոչ մին միւսոյն հա֊մար այդ պատիւը կ'ընէ.

Յունաց Տեառնըները մէյ մէկ զոյգ մոմակալներով, ունենալով ձեռքերնին խնկամաններ եւ վարդէջրամաններ։ Նախասարկաւագը Ե– Եւս խաղաղութեան կ'ըսէ բարձրաձայն և Հանդիսապետը Օրհնութիւն և փառս ըսելով կը խաչակնքէ և խունկ կը ձգէ. Դպրապետը Հրաշափառ շարականը կ'ըսկսի, որոյ կը ձայնակցին բոլոր եկեղեցականք և կարգաւ հանդարտաքայլ կ'իջնեն Եկեղեցին և Աւագ սեղանին առջեւ կը շարուին։ Հանդիսապետը հանդէսը կը կնքէ Պահպանիչով և երկու Տեառնըներն Հայոց եւ Յունաց 'ի նշան յարգանաց վարդեջուր կը սրսկեն Հանդիսապետին ձեռքը եւ կը համբուրեն, նոյնպէս միմեանց մի և նոյն յարգանքը կը տան և զիրար ողջունելով կը մեկնին (25)։ Յետ այնորիկ ճաշու կ'ըսկսին և հանդիսաւոր սուրբ Պատարագ կը մատչի. Պատարագիչը Եպիսկոպոս կը լինի։

---

(25) Տեղւոյս կարգին Հանդիսապետին և միմեանց ըրած յարգական ձեւերը որոշեալ հանդիսից ատենը կ'ունենան. Յոյնք՝ Հայոց երեք Հանդէսներուն այս պատիւը կը տան, և Հայք եւս փոխադարձաբար նոցա երեք Հանդիսի օրերը։

2°. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ. Շաբաթ օրը ժամը ութէն մինչեւ կիւրակի Հայոց պատարագի աւարտը տաճարին մէջ երկու ազգաց թէ՛ կանթեղները և թէ՛ շաբանները կը վառին։ Շաբաթ օրը ժամը ութին երբ Ս. Յակոբայ զանկը կը զարնուի, Ս. Պատրիարքը կամ Եպիսկոպոս մի հանդերձ Միաբանութեամբ Ս. Աստուածածին կ'երթայ. Հայոց Ձիթաստանին մէջ վրաններ լարած կ'ըլլան, ուր փոքր ինչ հանգիստ կ'առնեն։ Եթէ Յունաց վերափոխումն ևս նոյն օրը պատահի, նախ Յոյնք հանդիսիւ կ'իջնեն Գերեզմանը և իրենց արարողութիւնը կը կատարեն։ Հրաշափառ հանդիսական պատրաստութիւնները ըլլալէն վերջը, ազդարարութեամբ Թարգմանի՝ Հանդիսապետը եւ բոլոր եկեղեցականք վար կ'իջնեն, և Հրաշափառ հանդիսէն յետոյ՝ երեկոյեան ժամերգութիւն կը կատարեն։ Յետ ժամերգութեան կը վերադառնան 'ի Ս. Յակոբ, բայց կը մնան այն տեղ գիշերային պաշտամանց համար հինգ վեց վարդապետք, երեք չորս դպիրք, երկու սարկաւագք և աշխատաւոր եղ-

քաղքը, որ կանխաւ որոշուած՝ կ'ըլլան Լուսարարապետի անօրէնութեանը: Երեկոյին ժամը 12ին՝ դիմի Եկեղեցին Յունաց, Հայք եւս Եկեղեցի ժամերգութեան պաշտօնը կը կատարեն եւ Հսկում (26) կ'ընեն. իսկ գիշերը ժամը հինգէն սկսեալ ժամերգութիւն կը կատարեն: Օրհնութեան շարականի ատեն, Եկեղեցւոյ մէջտեղի Հայոց երկու ջահերը և Յունաց արեւելեան թեւին մէջ եղած մեծ ջահը կը վառեն, նոյնպէս Աւագ սեղանի բոլոր մոմերը: Զկնի ժամերգութեան Հայոց՝ Յոյնք ժամերգութիւն կ'ընեն և պատարագ կը մատուցանեն, որոյ կը յաջորդէ Հայոց Հրաշափառի հանդէսը և հանդիսաւոր պատարագը. պատարագիչը Ս. Պատրիարքը կ'ըլլայ. պատարագի ատեն կը վառին թէ՛ Հայոց և թէ՛ Յունաց բոլոր ջահերը և աշտանակները:

---

(26) Հսկման կարգը Ս. Յակոբեայ մէջ եւս կը կատարուի տարին երեք անգամ. այն է Հոգեգալստեան. Վարդավառի. և Վերացման խաչի շաբաթ երեկոյները Եկեղեցեէն անմիջապէս վերջը: Երբ Եկեղեցին կը լմննայ. Տէր ու Քահանամ կ'ըսկսին և կը շարունակեն մինչեւ Զկնի գոհանամքի վերջը. որով առաւօտեան ժամերգութիւնը կանոնագլուխէն կ'ըսկսի:

Digitized by Google

3°. 4°. 5°. **ԾՆՈՒՆԴ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ Ի ՅԱՆՆԱՅԷ, ՅՂՈՒԹԻՒՆ եւ ԸՆԾԱՅՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ.** Այս օրերը թէ՛ Հրաշափառ և թէ՛ Հանդիսաւոր Պատարագ կ'ըլլայ. Յոյնք սանդուխին մէջ տեղի իրե՛նց ջահը կը վառեն։ Այս օրերը Յոյնք եւս հանդէս կը կատարեն։

Այս գլխաւոր հանդէսներէն զատ, նաեւ Գիւտ գօտւոյ և Տփոյ Ս. Աստուածածնայ, Յովակիմայ և Աննայի, Հայր Յովսէփայ տօնի օրերը թէեւ Հրաշափառ չ'ըլլար՝ բայց Հանդիսաւոր պատարագ կը մատչի և Յոյնք այս տօներուն մանաւոր կանթեղներ ու շարաններ կը վառեն։

Հայոց հանդէսներուն փոխարէն Յոյնք եւս հանդէսներ ունին, այն է իրե՛նց Աւետման օրը Մարտի 25 ին. Հայոց և Յունաց կանթեղները կը վառին. Վարդավառին, որ 'ի 6ն Օգոստոսի, Վերափոխման, Օգոստոսի 14 ին, առաւօտուն Հայոց Պատարագէն զկնի Յոյնք Հրաշափառի հանդէս և Թաղման խորհուրդ կը կատարեն. Հայոց Աւագսեղանի և Հայր Յովսէփայ սեղանի մոմերէն զատ, բոլոր մոմերը, կանթեղ-

ները և շաքանները կը վառին ։ Նոյն երեկոյին և գիշերը Հրաշափառ կ'ըսեն և ժամերգութիւն կ'ընեն․ Հայոց Տեսուչը երկու Հրաշափառներուն եւ ներկայ կը լինի մոմակալներով ։ Գիշերային ժամերգութենէն մինչև Պատարագին աւարտը Հայոց երկու ջահը, բոլոր կանթեղներն ու աշտանակներն կը վառին ։

## ԱՒԵԼԱԾՈՒԹԻՒՆ

Տարին մի անգամ՝ ամբողջ տաճարը ամեն կողմ՝ եւ տեղ ընկերութեամբ կ'աւլուի, որ Ձձ աւել կ'ըսուի, իսկ մասնաւոր աւելածութիւնը ամեն օր սահմանեալ եղանակաւ կ'ըլլայ, այսինքն Եշ․ Ուր․ Շբ․ օրերը Հայք կ'աւլեն իրենց բաժինները եւ ընկերովի տեղերը, Բշ․ Գշ․ Դշ․ օրերը՝ Յոյնք․ իսկ կիւրակի օրերը յաջորդական կարգաւ, այն է մէկ կիւրակէ Հայք, եւ մէկ կիւրակէ Յոյնք կ'աւլեն ։

# ՄԱՍՆ Գ

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

ՁԻԹԵՆԵԱՑ լեռը Երուսաղէմի արեւելեան կողմն է. այս տեղէն Յիսուս Քրիստոս համբարձաւ՝ իւր աշակերտները օրհնելով, ուստի Քրիստոնեայք Համբարձման լեռ կ'անուանեն:

Քրիստոսի ոտնատեղւոյն վրայ Հեղինէ Թագուհւոյն ժամանակէն շինուած Եկեղեցի կար, որ Պարսից Խոսրով Թագաւորի յարձակման ժամանակ 616 ին աւերեցաւ: Մագիստոս երկը Պարսկաստան գերի վարեալ Զաքարիա Պատրիարքին տեղապահ նստաւ, Եկեղեցին նորոգեց. ինչպէս որ անկէ վերջը եկող ուխտաւոր Պատմագիրք կ'ըստորագրեն բոլորաձեւ և վերի կողմը բաց: Մինչեւ խաչակրաց ժամանակ Եկեղեցին պայծառ մնացած էր, բայց երբ իշխանութիւնը վերստին Մահմետականաց ձեռքն անցաւ, կրկին խանգարեցին եկեղեցին, որոյ աւերակ հիմերը

Digitized by Google

տակաւին կ'երեւին բակին մէջ։

Արտաքական ձեւով շինուած արդէն մատուռը, որ մէջը Մխիթար ունի, յայտնի չ'է թէ՝ որ դարու մէջ կառուցուած է. ութանկիւնի է 6—7 մեդր տրամագծով և վրան գմբեթով. սոյն եկեղեցին Հայոց սեպհականուած է անյայտ թուականաւ. Նախ հրամանագիր կ'առնեն, որ կ'արգիլէ գիւղացւոց Հայոց վանքին մօտ տուն շինելու. ժամանակ յետոյ Հայոց Միաբանութիւնը անկէ դուրս ձգուելով՝ Ֆէլլահք Վանքը կ'աւրեն և պարսպին կից մզկիթ մը կը շինեն հանդերձ մինարէով։ Երկրորդ անգամ Հայք հրամանագիր կ'ըստանան Սուլթան Ահմէտ Ա. ի օրով, Հիճրէթի 1022 ին, որով արտօնութիւն կը տրուի Հայոց՝ պարիսպը շինել և գմբէթը նորոգել։ Այս հրովարտակին մէջ կը յիշուի, որ ուրիշ Քրիստոնեայ ազգերն եւս իրաւունք ունին ուխտ և պաշտօն կատարելու։ Երրորդ անգամ հրամանագիր կ'ընդունին Հայք, որ կ'արգիլէ գիւղացւոց պարսպին մէջ մեռեալ թաղել։

Քրիստոսի տնկատեղւոյն գմբէթը

Digitized by Google

վնասուելով 1834ի շարժէն, Լատինք ուզեցին որ նորոգեն. Հայք եւ Յոյնք ընդդիմացան, որով դատաւորի հրամանաւ երեք ազգք ընկերութեամբ շինեցին։ Հայք ընկերութեամբ եղած շինութիւնը իրենց իրաւանց դէմ համարելով՝ բողոքեցին եւ վերյիշեալ երեք հրովարտակները Դատաւորին միջնորդաւ Ժողովին ներկայացուցին. Ժողովը վաւերական գտնելով հրովարտակները՝ իրան տուաւ, որով Բ. Դուռը ١٢٥٠, ٥١, ٥٢ թուականներուն հրովարտակներ շնորհեց Հայոց նորոգութիւն ընելու և սենեակներ շինելու համար։

Հայք անմիջապէս սկսան աշխատող-մը, կէս մը բակին մէջ կէս մը բակէն դուրս սեպհական երկրի վրայ կրկնայարկ սենեակներ շինել, պարիսպը նորոգել, ամբողջ գաւիթը քարայատակել, գմբէթին տակ Սեղան շինել եւ կանթեղօք և այլ եկեղեցական սպասուք զարդարել, ուր անխափան ամէն հինգշաբթի և կիւրակէ օրեր պատարագ կը մատուցանէին եւ արտաքին դռնէն մինչեւ մատուռին դրան կից

տախտակաշէն ծածք յօրինել առանց այլոց իրաւանց դպչելու. Հիւսիսային կողմը նոր ջրհոր մը շինեցին և հարաւային կողմի ջրհորը նորոգեցին: Լատինք եւ Յոյնք չը կարենալով տանիլ Հայոց ձեռօք եղած շինութեանը՝ քանիցս մարդ ղրկեցին 'ի Պօլիս և յԵգիպտոս և Գաղղիոյ ու Ռուսիոյ Դեսպաններու ձեռօք Թագրէր տուին Տէրութեան՝ գանգատելով յանիրաւի, իբրեւ թէ Հայք արգելք կ'ըլլան միւս Քրիստոնէից ուխտին: Ասոր վրայ հրաման կ'ելնէ, որ քննութիւն լինի Երուսաղէմի Դատարանին մէջ, Լատինք այս թուղթը որ Ճաթրզատէ Արիֆի անուն երեւելի անձին հետ ղրկուած էր քննչութեան պաշտօնով՝ այնպէս ներկայացուցին, որպէս թէ Հայոց շինութիւնը աւրելու համար տրուած լինէր և Ճաթրզատէն եւս Դեսպանին կողմէն շահուած լինելով ըստ հաճոյից քննութեան կ'առնու Համբարձման տեղը և նոր շինութիւնները: Այս քննութենէն յետոյ Բ. Դուռը Դեսպանաց թախանձանաց զիջանելով հրաման կը տայ քակելու եւ մատուռին

մէջ եղած շինութիւնները կործանելու ։ Այն հրամանագրին վրայ Հայք կարեւէր խոցուելով՝ չ՚ուզեցին նաեւ պաշտպանել_ թակէն դուրս իրենց սեպհական գետնոյն վրայ եղած սենեակները ։ Վերջին հրամանագիրը կարդացուելու օրը Լատին եւ Յոյն միաբանութիւնք իրենց արաբացի բազմամբոխ ժողովրդօք գնացին Զիթենեաց լեառը եւ կործանեցին Հայոց ամբողջ շէնութիւնները Թմբկօք և պարուք եւ նախնական վիճակին հասուցին ։

Մինչեւ ցարդ այս սրբազան վայրը մի և նոյն անարգ վիճակին մէջ է ․ բանալին գիւղացւոց ձեռքն է և նորոգութեան ծախքը տէրութեան գանձէն կը լինի ։ Տարւոյն մէջ միայն երկու անգամ, այն է Մեծ պահոց մէջ, և Քրիստոսի Համբարձման օրը պատարագ կը մատուցանեն Հայք, իսկ միւս ազգերը միայն Համբարձման օրը ։ Հայոցմէ Միաբանք առջի երեկոյին երթալով՝ Ունատեղին լուանալով կը մաքրեն և բակին մէջ հիւսիսային անկիւնը ժամերգութիւն կը կատարեն և առաւօտուն սուրբ պատարագ կը մատուցանեն ։

# ՄԱՍՆ Գ

## ԲԵԹՂԵՀԷՄ

ԲԵԹՂԵՀԷՄԸ, որ Ս. Գրոց մէջ Երկիր Յուդայ և փոքր Եփրաթայ կը կոչուի, Երուսաղէմի հարաւային կողմը տասն երկու հազարամէտր հեռու լերան մի վրայ շինուած է և չորս կողմը ձորերով պատած։ Այս տեղ ծնած են շատ երեւելի մարդիկ և 'ի վերջոյ Տէրն մեր Յիսուս Քրիստոս մի անարգ այրի մէջ, որ վատ եղանակներուն հօտից մակաղատեղի էր։ Քրիստոսի ծնարանն եղող Այրը, որ այժմ փառաւոր Եկեղեցի է, գիւղին արեւելեան ծայրն է, ինչպէս երեք ազգաց, Հայոց Յունաց եւ Լատինաց վանքերը։

## ԳԼՈՒԽ Ա

### ՆԱԽԿԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Այն հոյակապ Եկեղեցին շինուած է Քրիստոսի ծննդեան Այրին վրայ յա-

Digitized by Google

նուն Ս. Աստուածածնի : Յառաջ քան զշինութիւն Եկեղեցւոյ՝ Աբգարու կինը՝ Հեղինէ բարեպաշտ Թագուհին սոյն տեղը մաքրել տալով և որմնափակելով՝ երկրպագութեան տեղ որոշած էր. քիչ տարիներէ յետոյ ուրիշ Քրիստոնեայք աղօթարան մը շինեցին վրան, զոր 135ին Ադրիանոս կայսրն քակեց և տեղը անտառով շրջապատելով՝ Անտոնիս չաստուածոյն նուիրեց եւ Մսուրին վրայ Ափրոդիտեայ արձանը կանգնեց յերկրպագութիւն :

Մեծին Կոստանդիանոսի Մայրը՝ Հեղինէ կրկին մաքրել տալով սրբազան վայրը 327ին, շինութեան ձեռնարկեց և յետոյ իւր որդին, կամ ինչպէս մի Ազգ. աւանդութիւն կը հաստատէ, Տրդատ Թագաւորը լրացուց շէնքը՝ փառաւոր եւ հոյակապ Տաճար մի կանգնելով: Ըստ ազգային Պատմչաց Ե՟ դարու՝ Եկեղեցւոյն երկայնութիւնը 2000, իսկ լայնութիւնը 1000 կանգուն էր և 90 մարմարեայ սեանց վրայ քարուկիր կամարներով հաստատուած : Սակայն նոյն ժամանակէն յետոյ Եկեղեցին զանազան վտանգներու և դէպքերու առ-

Digitized by Google

թիւ իւր մեծութիւնը եւ չքութիւնը կորսնցուց ։

Սալահէտտին 1187ին Երուսաղէմին հետ Բեթղէհէմի ալ տիրեց. հինգ տարի յետոյ Սալխադուրի եպիսկոպոսը մեծ դժուարութեամբ հրաման ընդունեց յիշեալ Սուլթանէն, որ Բեթղեհէմի վանքին մէջ միայն երկու Լատին քահանայ միան մի քանի սարկաւագներով աստուածային պաշտօն կատարելու, ինչպէս որ Հայք շատ դարուց 'ի վեր կը կատարէին. բայց Լատինք սակաւ ժամանակէն կրկին վռնտուեցան ։ Ըստ Լատին Պատմչաց, խաչակրաց Ս. Երկրէն հեռանալէն յետոյ՝ Եկեղեցին անտերունչ մնալով քայքայեցաւ և Արաբացիք տանիքին կապարներովը հրացանի գնդակներ կը շինէին ։

Զանազան յիշատակարանք հակառակ Լատին Պատմչաց կը հաստատեն, որ Հայ եկեղեցականք միշտ պահած ու պաշտպանած են, ինչպէս 1227ին Տէր Աբրահամ և Տէր Առաքել Հայ եկեղեցականք իբրեւ տէր և իշխող Տաճարին՝ ներքին դուռը շինել կը տան տախտակեայ պատուական քանդակագոր-



Digitized by Google

ծութեամբ և հետեւեալ յիշատակարաններով, որ մինչեւ ցայսօր անեղծ կը մնան Հայ եւ Արաբացի լեզուաւ ։

"ԹՎ. ՈՀՁ. ԿԱԶՄԵՑԱՒ ԳՈՒՌՆՍ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՁԵՌԱՄԲ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԻ ԵՒ ՏԷՐ ԱՌԱՔԵԼԻ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՍ ՀԱՅՈՑ ՀԵԹՄՈՅ ՈՐԴԻՈՅ ԿՈՍՏԱՆԴԻՆԻ, ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՇԽԱՏԱՒՈՐԱՑ" ։ Իսկ Արաբերէնի բնագիրը եւ թարգմանութիւնն է.

كمل هذا الباب بعون الله تعالى في ايام مولانا
السلطان الملك المعظم في تاريخ الهجرة سنة
اربعة وعشرين وستماية

"Կատարեցաւ դուռս օգնականութեամբ Բարձրելոյն Աստուծոյ յաւուրս Տէրութեան Մեծափառ արքային Մերոյ ի թուին Տաճկաց 624" ։

Յունիս 1842ին, Եկեղեցւոյս ամբողջ նորոգութեան ատեն, աշխատեցան այս դուռը ոչնչացնել նորոգելու պատրուակաւ. բայց բարեյիշատակ Զաքարիա Պատրիարքը դրան վրայի յիշատակարանները հանդերձ բողոքագրով Բ. Դուռը ղրկեց և երկու պահապան կեցոյց դրան վրայ, որով Յունաց նենգութենէն պահպանուեցաւ իր հնութեամբը ։

Եկեղեցին արդի վիճակին մէջ խա

չափեւ է, ձեղունը փայտակերտ և սու-գաշէն առանց գմբէթի. տանիքը կա-պար և ամբողջ շէնքը 60 կարծրանիւթ քարեայ յաղթ սիւներու վրայ կեցած է։ Ժամանակին Յոյնք ուզելով Եկեղեց-ւոյ ձեւը փոխել, միջին դասը պատով անջրպետեցին սիւնազարդ գաւթէն։ Հիւսիսային դրան համար Հայք և Յոյնք 1846 ին դատ վարեցին Մեծ Եպարքո-սին առջեւը, որով Հայք գլխաւորա-բար կը պահանջէին նոյն դրան բանա-լին իրենց յանձնել։ Եպարքոսը թէ և վճռեց, որ 1813էն 'ի վեր վաւերա-կան Սենէդ ունեցողը ներկայացնէ, ա-պա թէ ոչ պատը վերցուի, բայց վճի-ռը անգործադրելի մնաց։

Սիւնազարդ գաւիթը հինգ սրահէ կը բաղկանայ չորս միակարգ սիւներով զատուած. այս սիւներուն միջեւ կա-խուած են Յունաց կանթեղները, զորս իբրեւ նորաստեղծման՝ Հայք 1846 ին յա-տուկ հրովարտակաւ վար առնել տը-ւին, բայց Յոյնք Սուլտանի կուսակալին հրամանաւ առանց Բ. Դրան գիտու-թեան վերստին կախեցին և ցարդ մը-նացած են։

Սիւնազարդ գաւթին մէջ հինգ դուռ կայ, երեքը արեւելեան կողմը և երկուքը հարաւային ու հիւսիսային կողմերն են. արեւելեան դռներուն՝ հարաւայինը և միջինը Յունաց են, իսկ հիւսիսայինը՝ Հայոց, որուն ընկեր են նաեւ Յոյնք, զոր միայն ներսէն գոցելու իրաւունք ունին, իսկ դուրսէն գոցելու կամ բանալու երբէք։ 1813ին Հայք շատ աշխատեցան այն դրան բանալին առանձինն իրենց յատկացնել, բայց դատաւորք Յունաց ընդդիմութենէն չը կամեցան. 1845ի հրովարտակի զօրութեամբ նոր փականք ուզեցին դնել, դարձեալ չըյաջողեցան։ Հարաւային դուռը Յունաց, որ իրենց վանքը կը տանի. իսկ հիւսիսայինը՝ Լատինաց, ուստի Ծննդեան և այլ հանդիսաւոր օրեր կարդալով անց ու դարձ կ՚ընեն ինչպէս եւ ննջեցեալները աստի կը տանին։

## ԳԼՈՒԽ Բ

## ԱՐԴԻ ԵԿԵՂԵՑԻ

Ա. Ծննդեան արդի բուն Եկեղեցին սիւնազարդ գաւթէն որմով բաժնուած

է , և երեք դասէ կը բաղկանայ ․ Հա-
րաւային կողմը և միջին Աւագ սեղանը ,
որոյ տակ է Ծննդեան Այրը , Ցունաց
սեպհական են , իսկ հիւսիսային դասը`
Հայոց սեպհականեալ 1813 ին ․ ըստ ո-
րում սոյն Թուականին Հայոց և Ցունաց
միջեւ տեղի ունեցած մեծ վէճին եւ
դատէն յետոյ` բարեյիշատակ Սուլթան
Մահմուտ Մեծ կայսեր տուած հրովար-
տակաւ (١٢٢٨) Հայք Ս․ Ծննդեան ե-
կեղեցւոյն վրայ եւս Ցունաց հաւասար
իրաւունք ունեցան , զոր կորուսած էին
բաւական տարիներէ 'ի վեր մինչեւ
1813 Թուականը ։ 1813 ին հիւսիսային
դասին մէջ Ցունաց ունեցած եկեղե-
ցական զարդերը վերցունելով` Հայոցը
դրուեցան , կանթեղներն ու պատկեր-
ներն մասամբ այն ատեն , մասամբ եւս
1836 ին կարգադրութեան ։

Ինչպէս ըսինք , Հայոց թէ այս և
թէ ամբողջ Եկեղեցւոյն ընկերովի ի-
րաւունքը Տէրութեան երկու հրովար-
տակներով (١٢٢٨) նուիրագործուած
են , բայց վէճը և կռիւը երբեք պակ-
սած չ'է երկու ազգաց մէջ ; երբեմն
կանթեղի , պատկերի եւ ժամերգու-

Digitized by Google

թեան և երբեմն սիւնազարդ գաւթէն հանդիսաւոր օրեր՝ եկեղեցական զգեստով եւ երգելով անցուդարձի առթիւ ։

Հայոց սեպհական մասը ունի երկու խորան, մատուռ և պահարաններ, ուր կը դրուին եկեղեցական զգեստք և անօթք ․ կանթեղներէն և պատկերներէն ոմանք բարձր կիսակամարի որմէն բեւեռով հաստատուած են և ոմանք առորին ձեղունէն կախուած, իսկ մէկ փոքր ջահ և երկու կանթեղ 1813 ին եւ երկու շար կանթեղաց շղթայ 1836 ին վերին ձեղունէն կախեցին, բայց շղթաներուն վրայ կանթեղ կախելը 1845 ին արգիլուած է ․ Թէ և նոյն թուականին տրուած հրովարտակի (١٢٥٩) առանձնաշնորհումով Հայք այս կրկին շղթաներուն կանթեղները կախեցին, ինչպէս և պատուհանները բանալ և փակելու և աւելածելու հրաման ընդունեցին, նոյնպէս սիւնազարդ գաւթի Յունաց կանթեղները իբրեւ նորաստահման վար առին, բայց սակաւ ժամանակէն զկնի Յոյնք յաջողեցան Յայտայի կուսակալէ հրամանաւ Հայոց

կոնսֆեզները վար առնել եւ իրենց վերստին կախել. արգիլել Հայոց՝ լուսամուտները բանալ ու փակելը, արտաքին դրան բանալու գործածութիւնը եւ այն օրէն 'ի վեր աւերածութեան համար եւս վէճը եւ կռիւը դադրած չ'է։

Երբ 1813ին դատաւորք Հայոց իրաւունքները և հիւսիսային մասը իրրեւ սեպհականութիւն հաստատեցին, որոշեցին, որ Լատինք սուրբ Այրը երթալու համար՝ Հայոց եկեղեցւոյ եզրէն պատի տակով անցուդարձ ընեն առանց փողոցները ոտնակոխ ընելու. այն ատեն Լատինք յօժարակամ ընդունեցին այս որոշումը, բայց վերջը սորվացան. ուստի ոչ միայն եկեղեցականք, այլ նաեւ գիւղի Լատին ժողովուրդը իբրև իրենց սեպհական ճանապարհէն, Հայոց փողոցներուն վրայէն անցուդարձ ընել. եկեղեցականները հրել, գրքակալը կործանել և այլ շատ անիրաւութիւնք սկսան ընել։ Ասոր սկսաւ Հայոց ու Լատինաց միջեւ կռիւն ու ատելութիւնը։ Մի անգամ Հայոց երկու վարդապետները չարաչար վիրաւորուե

ցան, եւ այս անհլութիւնը տեւեց մինչեւ 1819 Ապրիլ 16, որ առեն Դամասկոսի կուսակալ Սալէհ փաշայն յերուսաղէմ պաշտօնական այցի (փէլը) գալով՝ Հայոց արդար բողոքը լսեց, Լատինաց դուռը Շէյխի օրինօք պատով հիւսեց և պատուիրեց հրովարտակաւ հաստատել զայն։ Հայք այս մասին երկու հրովարտակ առին (١٢٤٤—١٢٥١), այնու ամենայնիւ Բ. Դուռը Գաղղիոյ. տէրութեան Թախանձանաց զիջանելով՝ դուռը բանալու հրաման տուաւ և բացին ըստ առաջնոյն, որով Լատինք 1836 ին Զատկանի օրէնօք նոյն դռնէն մտնելով և Հայոց Եկեղեցւոյ մէջ տեղէն մինչև Այրը ուղղակի երթալ գալու Թափօրէ և այն ժամանակ, և նոյն ճանապարհը մինչեւ Այրի դուռը աւելածելու սովորութիւնը հաստատեցին. մի և նոյն անիրաւութեամբ ճանապարհի ուղղութեամբ Հայոց փողոցները կարեցին.

## ԳԼՈՒԽ Գ

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԱՅՐ

Այս սրբավայրը Յունաց Աւագ խորանին ներքեւն է. ունի երեք դուռ, մին Յունաց հարաւային դասին մէջ և նոցա յատկացեալ, ուրկէ 13 աստիճանաւ վար կ'իջնուի. միւսն՝ Հայոց հիւսիսային կողմն 16 աստիճանաւ, զոր Տէրութիւնը վաւերական գրով համաձայն շնորհած է Հայոց և Յունաց յընկերական գործածութիւն. իսկ Լատինք, որ այժմ նոյն դրան ընկեր են, յայտնի չէ թէ որ թուականէն այդ իրաւանց տիրացած են, ինչպէս նաեւ նոյն դրան ներքին երկու կողման որմոց և ձեղունին վրայ վարագոյր կախելու իրաւունքը երբ և ինչ հրամանագրերով ստացած են։ Արեւմտեան դուռը Լատինաց կը պատկանի, ուրկէ իրենց եկեղեցին կ'երթան ստորերկրեայ գերեզմաններէն անցնելով։

Հայոց կողմի դրան կիսաբոլորակ աստիճանները մինչեւ Այրի դուռը, մէկ օր Հայք և մէկ օր Լատինք կ'աւլեն։ Այս աստիճաններուն վրայ՝ դրան

երկու կողմը զոյգ մի մեծ և կերոնաբարձ աշտանակ կը դնեն Հայք Ծնընդեան ճրագալուցին, ուր կը մնան մինչեւ ութօրէից վերջը՝ Յովհաննու Մըկրտչի տօնի օրը. Լատինք եւս կը դընեն իրենց Ծննդեան և այլ տօներուն։ Դրան վրայ երկու պատկեր կայ, մէն մի մշտավառ կանթեղով. սոցա մին Հայոց և միւսը՝ Յունաց է։ Այն դրան ներքին աջ ու ձախ որմոց և ձեղունի վարագոյրները մինչև սատիճանաց վաքի սահմանը Լատինաց են։

Այրին արեւելեան ճակատի սեղանը շինուած է Յիսուսի Քրիստոսի Ծընընդեան տեղւոյն վերայ, որ սեղանին տակը մարմարեայ յատակով և կիսաբոլորակ ձեւով է, եւ որոյ մէջ տեղը փոսիկ մի կայ, արծաթեայ ճաճանչ մի ագուցուած և բոլորտիքը Լատիներէն գրուած Աստ ծնաւ Յիսուս Քրիստոս ՚ի Մարեմայ կուսէն։ Այս տեղ 16 մշտավառ կանթեղ կան, 4ը Լատինաց. 6ը Հայոց և 6ը Յունաց, իսկ ամբողջ սեղանին և կամարին, ինչպէս և հարաւային սատիճանաց երկու կողման որմոց վարագոյրները Յունաց են։

Digitized by Google

Այս սեղանէն երեք մէ՛տր դէպ ՚ի հարաւային արեւմտեան կողմը երեք աստիճանաւ վար կ՚իջնուի Մսուրը, որ ժայռին մէջ փորուած և մարմարեայ քարերով մէջը ագուցուած է. Հիւսիսային արեւելեան ծայրի սիւնով Մը-սուրի մուտքը երկուքի կը բաժնուի, ուր երեք աղգերը մէյ մէկ աշտանակ ունին մշտավառ մոմերով։ Այս տեղւոյն արեւելեան կողմը սեղան մի կայ յանուն Երից Մոգուց, ուր Մոգերը կանգնած էին ըստ աւանդութեան իրենց ընծայները Մանուկ Թագաւորին մատուցած ժամանակ։ Արեւմտեան կողմը ժայռին մէջ փորուած ցածագոյն փոս՚մի կայ մսուրի ձեւով, ուր դրաւ ամենօրհնեալ Կոյսն Մարիամ՝ իւր աստուածային Որդին. այս տեղ, որ մարմարներով զարդարուած է, Լատինք հինգ մշտավառ կանթեղ ունին և պատին երեսները կերպասով ծածկած են։

Ի սկզբան այս տեղը Հայոց սեպհական էր, ուր կը կատարէին իրենց հագեւոր պաշտօնները եւ պատարագ կը մատուցանէին. Այրին մէջ եւս ունէին պահարան և արկղ, ուր կը պահէին

Digitized by Google

եկեղեցական զգեստներ ։ Լատինաց հակառակութիւնը զօրանալով՝ 1621ին յանկարծ խորտակեցին պահարանը և արկղը, որոց մէջ եղած անօթները անյայտ կորսնցուցին. վերուցին նաև Հայոց կանթեղները և խաչառ մերժեցին նոյն տեղէն ։ Այս խնդրոյն դատը և բողոքը Գրիգոր Պարոն տէր կոչեցեալ Պատրիարքը մինչև Բ. Դուռը հասոյց եւ Տէրութիւնը հրովարտակ տուաւ (١٠٤١) Լատինաց յանդգնութիւնը զսպելու, ինչպէս և Դատարանը Կէօճէբ և Շէյխ–Իւլ–Իսլամը ֆէթվա, բայց անկարելի եղաւ Հայոց իրենց կորսուսեալ իրաւունքն ձեռք բերել. միայն Այրին մէջ երկու կանթեղ կախեցին, զոր յետոյ կրկին վերուցին ։ Իսկ երբ Յոյնք զօրանալով՝ տիրեցին Թէ Այրին և Թէ Եկեղեցւոյն, Լատինները բոլորովին մերժուեցան. Հայք եւս բաւական վընասուեցան ։

Եղիազար կաթողիկոսը, որ Երուսաղէմայ պատրիարքական իշխանութեան հետ Թուրքիաբնակ Հայոց վրայ կաթողիկոսական իշխանութիւն ստացած էր. այս խնդրոյն համար հրովարտակ կ՚առ-

Digitized by Google

նէ (١٠٦٠) և Գաղայի Բդեշխին միջնորդութեամբ Յունաց հետ կը հաշտուի եւ Դատարանի օրինօք 1656ին Ակրին մէջ Ազգ. իրաւունքը վերստին ձեռք կը բերէ։ Նոյն ժամանակի Նէօծէյները այսպէս կը բաժնեն Ակրը, երկու բաժինը եւ՝ հարաւային դուռը Յունաց, մէկ բաժինը և հիւսիսային դուռը Հայոց և իւրաքանչիւր դրան մէն մի աղդէն մէն մի պահապան. սոյն միջոցին արեւմտեան դուռը հիւսուած էր։ 42 կանթեղ Յոյնք կը կախեն Ակրին մէջ, 21 հատ Հայք, որոց հինգը Մարոյն վերայ. Ծննդեան տեղը Յունաց պատարագին կը յատկանայ, իսկ Մարոյն մէջ Մոզուց սեղանը՝ Հայոց։ Այս կարգադրութիւնը բաւական ժամանակ կը պահպանուի, բայց վերջը Լատինք կըրկին զօրանալով Յունաց ձեռքէն կը գըրաւեն թէ Ակրը և թէ Եկեղեցին, որով յիշեալ կարգադրութիւնը կը խափանուի եւ Հայոց իրաւունքը կը կորսուի։

Ա. Ծննդեան Ակրի թէ յատակը և թէ որմերը մինչեւ ծածքի կամարին սալորովը ձերմակ մարմարիոնով ծած-

կուած են ։ Զեղունէն կախուած 11 կանթեղ ունին Հայք , 11 Յոյնք եւ 9 Լատինք ։ Դարձեալ Հայք 10 պատկեր ունին , որոց 7 հատը 1869 ին անյայտացան ձեղունի ծածկոյն այրուելու ատեն եւ մի և նոյն ժամանակ կանթեղաց շարաններն ալ այրելով՝ վար թափեցան եւ խորտակեցան ։ Այրած ծածկոցը որ հնացած էր , Լատինք կ'ուզէին առանձինն նորոգել , բայց Հայք եւ Յոյնք կընդդիմանային ։ Տէրութիւնը Հայոց կողմէն եղած բողոքին վրայ զիջանելով՝ երկու պատկերաց կրկին դրուելուն հրաման տուաւ և այն ատեն դրուեցան . Մնացած չորս պատկերները վերջը դրուեցան . իսկ միայն տեղը Լատինք յափշտակեցին իրենց պատկերը կախելով . Այժմ թէ Հայոց և թէ Յունաց պատկերները Լատինաց վարագուրին վրայ կախուած են , ըստ որում առաջ Այրին պատերը մերկ էին , բայց Լատինք յաջողեցան ամբողջ ծածկել 1874 ին յատկապէս յԵւրոպա պատրաստել տուած պատկերազարդ վարագուրաւ ։

Digitized by Google

# ԳԼՈՒԽ Դ

## ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ, ՊԱՏԱՐԱԳ, ՀԱՆԴԷՍՔ, ԵՒ ԱՅԼ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ

Երեկոյեան ժամերգութիւնը նախ Հայք կ'ընեն իրենց սեպհական հիւսիսային մասին մէջ. յետ այնորիկ Յոյնք՝ իրենց բաժնին մէջ. Ժամերգութեան ժամուց նախնական սահմանն էր, որ Հայք ժամը իննին սկսին իրենց ժամերգութիւնը, յետ այնորիկ Յոյնք. բայց այս մասին Յոյնք վերջին տարիներս շատ հակառակութիւններ ըրին ընդ Հայս, երբեմն հակառակութեան համար Յոյնք իրենց ժամերգութիւնը կ'ըսկսէին Հայոց ժամերգութիւնը չը լրացած, որով շփոթութիւն և խափանումն լինէր աստուածային պաշտամանս. Յունաց այս հակառակասիրութեան նպատակն էր ստիպել զՀայս, որ կանուխ սկսին ժամերգութիւնը եւ կանուխ աւարտեն. Այս չարեաց առաջն առնելու համար երկուց ազգաց համաձայն հաւանութեամբ որոշուեցաւ, որ Հայք իննին

Digitized by Google

քառորդ. Միացած սկզբն ժամերգութիւնը, որով խափանեցաւ հակառակութիւնը։

Առաւօտները կանուխ Յոյնք կ'ըսկսին ժամերգութեան, որ առեն Հայոց լուսարարը կանթեղները կը լուցէ և պաշտօնէից լուր կը տայ 'ի պատրաստութիւն. յետ աւարտման Յունաց՝ անմիջապէս Հայք կ'ըսկսին։ Բայց Յոյնք պարտաւոր են Լատինաց Այրը պատարագելու չ'եկած՝ ժամերգութիւնը աւարտել, որպէս զի Հայոց Սարկաւագը Տէր վէ Եօղու-մի ժամանակ Այրը խնկելու արգելք չունենան. վասն զի Լատինաց պատարագի ժամանակ ամփոփութիւն չէ վար իջնել։ Ժամերգութեան առեն Հայք եթէ ժամանակ ըլլայ կը խնկեն Այրը, Տէր վէ Եօղու-մին, Հանգըստեան, Օրհնու-թեան և փառք 'ի Եարձու-նին. իսկ եթէ ժամանակ չըլլայ; Տէր վէ Եօղու-մին և փառք 'ի Եարձու-նին միայն և անխափան. երբեմն կը պատահի, որ փառք 'ի Եարձու-նի ժամանակ՝ Լատինք դեռ եւս պատարագը աւարտած չեն լինիր, ուստի Հայք պէտք է երկարաձգեն ժամերգութիւնը՝ մինչեւ Լատինք մեկ-

նին Այրէն, որպէս զի խնկելու սովո-
րութիւնը կատարեն ։

Յետ աւարտման Հայոց ժամերգու-
թեան, Յոյնք կը պատարագեն Ծնըն-
դեան սեղանին վրայ, ուր կը դնեն 'ի
սկիզբն ժամերգութեան իրենց պատ-
կերը և կը վերցնեն յետ պատարագի
և անմիջապէս Հայք իրենց պատկերը
կը դնեն. սակայն Լատինք թէև պատա-
րագի կ'իջնեն և Մորոյ սեղանին վրայ
կը մատուցանեն. շաբաթը մի անգամ
ձայնաւոր պատարագ կը մատուցանեն
երգեհոնով, որ նորաահման է. այնու-
հետեւ Հայք կը պատարագեն Ծնըն-
դեան սեղանին վրայ եւ ըստ Յունաց
յետ պատարագին կը վերցնեն պատ-
կերը և պատարագի սպասը ։

Ինչպէս Հայք, նոյնպէս Յոյնք ժա-
մերգութեան ատեն Ս. Այրը խնկե-
լու սովորութիւն ունին. խնկարկու-
սարկաւագը հարաւային դռնէն վար
կ'իջնէ և հիւսիսային դռնէն վեր կ'ել-
նէ բաց 'ի Ծննդեան օրէն. բայց մի
քանի տարի է; որ այն օրն եւս կ'ու-
զեն ամենօրեայ սովորութիւնը կատա-
րել, այն է հիւսիսային դռնէն վեր ել-



Digitized by Google

նել, որոց համար մեծ և հակառակու-թիւն կը պատահի ։

Հայք հանապազօրեայ ժամերգու-թենէն և պատարագէն զատ իրաւունք ունին տարին տասներկու անգամ՝ որո-շեալ օրեր յորս Ս. Պատարագի ժամա-րարը զգեստով, եւ այլ եկեղեցականք փիլոնով, զոյգ մոմակալներով, երգե-լով սիւնազարդ գաւթէն անցնիլ եւ վանքը երթալ ։ Այն օրերն են Ս. Ծննդ-եան և Յարութեան երեկոյները և տա-ւօնները, Համբարձման, Հոգեգալստեան, Վարդավառի, Վերափոխման, Վերացման խա-չի, Ծննդեան ութօրէից, Տեառնընդառաջի և Ծաղկազարդի տաւօնները ։

Ս. Ծննդեան ճրագալոյցի օրը միւս ազգաց նման Հայոց Ս. Պատրիարքը հանդերձ միաբանութեամբ և ուխտա-ւորաց բազմութեամբ Բեթղեհէմ կեր-թայ ։ երբ կը հասնին Երկաթեայ փոք-րիկ դրան առջեւի սալայատակին գլու-խը՝ Վանուց Տեսուչը՝ ճամբարար վար-դապետներով կը դիմաւորէ զՍ. Պատ-րիարքը և Խորհուրդ մեծ երգելով կը տա-նին վանքը, ուր կը հանգչին փոքր ինչ ։ Այս միջոցին Սիւնազարդ գաւթին մէջ

Հրաշափառի հանդիսական պատրաստութիւնքը կը լինին և փայտեայ դրան ներսի կողմը գորգ կը փռեն։ Յետ պատարագութեան ժամը Ձին կ՚ազդարարուի. Ս. Պատրիարքը, կամ Հանդիսապետ Եպիսկոպոսը հանդերձ եկեղեցական դասուք վար կ՚իջնէ, փայտեայ դրան ներսի կողմը շուրջառ, խաչ եւ գաւազան առնելէն զկնի, Հանդիսականք Հրաշափառ երգելով կարգաւ ուղղակի կ՚երթան Սիւնազարդ գաւթի մէջ տեղէն և հիւսիսային դռնէն Եկեղեցին կը մտնեն և Ս. Աթոռը կ՚իջնեն. Հանդիսապետը նախ կը խնկէ Ծննդեան եւ Մոգուց սեղանները, նոյնպէս ամբողջ Աթոռը շուրջանակի, յետոյ թէ Ծննդեան Տեղը և թէ Մսուրը գորգ փռելով ուխտ և երկրպագութիւն կ՚ընէ. յետ այնորիկ բոլոր եկեղեցականք զոյգ առ զոյգ խոնարհութիւն ընելով Հանդիսապետին, ուխտ և երկրպագութիւն կ՚ընեն յիշեալ Տեղերը եւ վերջը վեր կ՚ելնեն և Աւագ սեղանին առջեւ հրաշափառի սկսուած արարողութիւնը կը վերջացնեն եւ ժամերգութիւն [27]

(27) Յոյնք թէ երեկոյեան եւ թէ առաւօտեան

կ՚ընեն ։ Յետ ժամերգութեան հանդիսաւոր Ս. Պատարագ կը մատչի Ծննդեան սեղանին վրայ եւ զկնի պատարագին հանդիսիւ ժամարարը զգեստով վանք կը տանին ։

Գիշերուան ժամերգութիւնը ժամը 5 ին կ՚ըսկսին . զկնի Ողորմեայ՝ Տէր յերկնից երգելով Այրը կ՚իջնեն եւ այն տեղ կը կատարեն մնացեալ մասը ։ Յետ աւարտման ժամերգութեան՝ սուրբ պատարագ կը մատչի (28) Աւագ սեղանին վրայ , բայց սպասը Ծննդեան սեղանը կը դրուի և Աւագ սեղանին առջև Մկրտութեան խորհուրդը կը կատարուի ։ և ապա հանդիսաւոր պատարագ

---

ժամերգութիւնը ըստ նախնական կարգադրութեան՝ իրենց վանքին մէջ կը կատարեն , ինչպէս և Հայք նո-ցա Ծննդեան օրը . բայց գիշերուան պատարագները սովորական կարգաւ են ։

(28) Այս միջոցին Լատինք Այրին մէջ կը պատարագեն , բայց ոչ ըստ ամենօրեայ սովորութեան վերի դռնէն կը գան , այլ Այրին միջի իրենց յատուկ դռնէն , վասն զի ՚ի վաղուց այնպէս կարգադրուած է , Հայք Ճրագալոյցի օրը իրենց եկեղեցին ամբողջ կը փակեն և Լատինք Հայոց եկեղեցւոյն մէջ բացուած դուռը փակ կը պահեն եւ անոր անցուդարձ չ՚են ըներ ։

կ'ըլլայ Այրին մէջ. Պատարագիչն է կամ Ս. Պատրիարքը եւ կամ Եպիսկոպոս մի ։

Ծննդեան սեղանի շարժական պատկերը, զոր ինչպէս վերն ըսինք Թէ՛ Հայք և Թէ՛ Յոյնք միայն պատարագի ժամանակ կը դնեն իւրաքանչիւրն իւր պատկերը, Ճրագալուցի կէս օրին Հայք կը դնեն և չ'են վերցներ մինչեւ երեք օր, երրորդ օրը յետ պատարագի կը վերցնեն. Նոյնպէս Յոյնք իրենց Ծննդեան (29) երեք օր չ'են վերցներ ։ Որ ազգին որ Ծնունդ է և նորա պատկերը դրուած է, միւս ազգը պատարագելու առեն իրեն պատկերը դրուածին առջեւ կը դնէ, բայց Հայք երկաթիձան տախտակ մի կը դնեն և անոր վրայ իրենց պատկերը կը կեցնեն ։

---

(29) Յունաց Ծննդեան, որ 'ի 25 Դեկտեմբերի, Լատինք և Ասորիք հրամանագրով Ս. Պատրիարքի Բեթղեհէմ կ'երթան եւ Հայոց վանքը կ'իջեւանին. Լատինք երկիցս կը պատարագեն Հայոց Աւագ սեղանը, այն է Ճրագալուցի առաւօտուն եւ երեկոյին. իսկ Ասորիք Թլփատութեան սեղանին վրայ կը պատարագեն Ճրագալուցի երեկոյին եւ գիշերը Հայոց դպրատով ։

Digitized by Google

Աւագ Հինգշաբթուան կէս աւուր պատարագը Հայք Ս. Աթոռին մէջ կը մատուցանեն, իսկ երեկոյին Ոտնալուային, Աւագ Ուրբաթու գիշերային ժամերգութիւնը, յերեկոյին Թաղման արարողութիւնը Աւագ սեղանին առջեւ կը կատարեն. Վերափոխման օրը զկնի պատարագին խաղող օրհնելու արարողութիւնը Ս. Աթոռին մէջ կը լինի. Ծաղկազարդի առաւօտուն ըստ սովորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ՝ անդաստան կը լինի զկնի պատարագին. Դռնբացէքի խորհուրդը Աթոռին դրան քովը Թլփատման սեղանի առջեւ կը կատարուի։

Այս իրաւունքներէն զատ ունին նաեւ Հայք իրաւունք պատահած ննջեցեալները սուՆազարդ գաւթէն կարդալով եւ եկեղեցական զգեստով տանիլ յԵկեղեցի եւ հոն կարգը կատարելով՝ մի եւ նոյն կերպով հանել. Պասկի խորհուրդը կատարել եւ հանդիսիւ հանել սուՆազարդ գաւթէն. Մկրտութեան խորհուրդը կը կատարուի Վանուց եկեղեցւոյ (30) մէջ, բայց յետ

(30) Այն Եկեղեցին 1621—1622 ին Գրիգոր Պա-

մկրտութեան երեխային Յ. Ա՛յրը կ'իջեցնեն պատարագէն վերջը հաղորդելու համար և այսպես հանդիսիւ կը հանեն սունազարդ գաւաթէն (31):

Երբ Նորեկ Ուխտաւորներ լինին, Նախ՝ Հայոց լուսարարը կ'ազդարարէ Յունաց լուսարարին, որպէս զի Ծննդեան սեղանի երկաթեայ վանդակը բանայ, ուր կը դնեն Հայք նոյն միջոցին Պատկերը, Խաչ, Աւետարան, աշտանակներ, ծածկոց և այլ պէտք եղած զարդեր: Նոյնպէս կ'ազդարարէ Լատինաց լուսարարին, որպէս զի իմանայ

---

րան Տէր չինեց յանուն Ս. Աստուածածնի. 1727ին Գրիգոր Շղթայակիր նորոգեց եւ երկու սեղան եւս կանգնեց յանուն Յովհաննու Կարապետին և Ստեփաննոսի Նախավկային:

(31) Սունազարդ Գաւաթէն հանդիսաւոր ամենատօնուդարձ արգիլելու համար Յոյնք վերջին տարիները շատ աշխատեցան և ամեն չարիք բարբարոսաբար 'ի գործ դրին. Հայոց եկեղեցական պաշտօնները պատուեցին. զաւազան և խաչ խորտակելով՝ ստանակրի ըրին. Ննջեցելոց դագաղը, որ նուիրապաշտին համար խիստ յարգելի և անբռնադատելի է; բռնադատեցին. այնու ամենայնիւ անյաղթ զառն եկեղեցւոյ նորատակը 'ի գլուխ տանելու. բայց այսօր այս ամեն իրաւունք և ազատութիւնք նուիրագործեալք են Օսմանեան բարեյիշատակ Սուլթանաց շնորհած հրովարտակներով:

Digitized by Google

թէ․ նոյն ժամուն թափօր և խնկարկու-
թիւն ունին․ եթէ ունին և շուտ մի-
տի ընեն, կ՚ըսպասեն մինչեւ թափօրի
կամ՝ խնկարկութեան վերջը․ իսկ եթէ
չ՚ունին՝ վանուց Տեսուչը և ժամարար
վարդապետը Ուխտաւորները կ՚առաջ-
նորդեն Ս․ Այրը․ երբ Այրին դուռը
կը հասնին, լուսարարը Տեսչին կամ՝ նո-
րա հաճութեամբ ուրիշ վարդապետի
մը շուրջառ եւ Աւետարան կը տայ․
խնկով ու մոմեղինով "Խորհուրդ Մծ"
երգելով կ՚իջնեն վար․ յետ ընթերց-
ման Ծննդեան Աւետարանի եւ փառ-
ք Բարձունս ասելոյ, համառօտ ծանու-
ցում՝ մի կ՚ընէ և Պահպանիչով կը վեր-
ջացնէ։ Ուխտ եւ երկրպագութենէն
վերջը կը վերցնեն սեղանի վրայէն ա-
մեն գլուածները և Յունաց լուսարա-
րը գալով վանդակը կրկին կը փակէ։

Հայք շաբաթը երկիցս, այն է չո-
րեքշաբթի և շաբաթ օրերը անխափան
Քրիստոսի Ծննդեան Ս․ Տեղը տաքջրով
լուալու և մաքրելու իրաւունք ունին․
թէեւ շատ առաջները ամբողջ Այրը
նաեւ կ՚աւլէին, բայց զայս խափանած
են հակառակորդք։

Digitized by Google

# ԳԼՈՒԽ Ե

## ԱՐՏԱՔԻՆ ԵՐԿԱԹԵԱՑ ԴՈՒՌ

Այն դուռը 'ի սկզբանէ անուն Հայոց վանքին դուռը համարուած էր, որովհետեւ բաց անոր ուրիշ դուռ և ճանապարհ չունէին վանքը մտնելու և ելնելու։ 1758 Թուին երբ Ցոյնք Քէօսրիւլիւ Վէզիրին օրով արտաքսեցին Եկեղեցիէն զԼատինս Տէրութեան հրովարտակով (١١٧٠), այս դուռն եւս գրաւեցին. սակայն Հայ.ք իրենց ձեռքին եղած բանալին կը գործածէին մինչեւ 1804, ինչպէս Պատասխանական գրութիւնք կը ցուցնեն։ Այնուհետեւ Ցոյնք (١٢١٨) հրովարտակաւ իսպառ խափանեցին Հայոց բանալիին գործածութիւնը, որով Հայ.ք 'ի փակել դըրանն կ'արգիլուէին իրենց վանքին մէջ, Թէեւ 'ի ստիպել հարկին Լատինաց դռնէն ելլ ու մտնել կ'ընէին Թոյլտուութեամբ։ Երկար ատեն սոյն անիրաւութեան դէմ վիճեցին եւ բողոքեցին, բայց միշտ անլսելի մնացին, որով պարտաւորեցան վանքին ներքեւ գտնուած

խանին մէջէն մի դուռ բանալ, որպէսզի խանի դռնէն կարողանան երթեւեկել:

1813 ին ընկերակցութեան տանն Հայք դատաւորները շատ ստիպեցին գոնէ դրան գործածութեան մասին Ցունաց ընկերելու, բայց նոքա Հակառակ Տէրութեան հրամանին չըներեցին: Հայք 1836 ին Եկեղեցին նորոգելու հրովարտակ առին, Ցոյնք եղծանել տուին զայն եւ իրենք նորոգեցին 1842 ին հաճութեամբ Հայոց, որով տիրապետութեան եռանդը աւելի զօրացաւ եւ սաստկացաւ ատելութիւնն ընդդէմ Հայոց: Եկեղեցւոյ նորոգութեան խնդրոյն համար Հայք 1845 ին հրովարտակ մի առին (١٢٥٩), որով Պատասաւորը Հէօճէթ և Իլամ գրելէ զկնի՝ դրան բանալին հրապարակաւ Հայոց տուաւ. բայց յետ վերադարձին յԵրուսաղէմ, արգիլեց Հայոց բանալին գործածութիւնը: Հայք ընդերկար Բ. Դուռը Թախանձեցին և խնդրեցին կամ բանալին գործածութիւնը և կամ նոյն դրան մօտ մի ուրիշ դրան բացումը: Այս խնդիրը մինչեւ արդա

բուլթեան Պոտեանը եղաւ և Շէյխ-իւլ-իսլամի վճիռ տուաւ․ բայց Ցոյնք վերըստին խափանեցին և ժամանակի ձախողուածները զայն մոռացութեան մէջ թողեցին և այնպէս մնաց մինչեւ հիմայ ։

Արեւելեան պատերազմէն յետոյ Լատինք երբ 1856 ին Ծննդեան տեղւոյն Աստղը բեւեռեցին, սոյն դրան մէկ բանալին եւս առին, բայց չ'էին գործածեր, այլ միայն այն ժամանակ, երբ Ցոյնք սահմանեալ ժամուն բանալու դանդաղին․ Հայք եւս մի և նոյն պարագային մէջ կարող են գործածել իրենց բանալին ([32]) ։

Արտաքին երկաթի դրան ներսի կողմը փոքրիկ ու մութ գաւիթ մի է, ուր կան երեք դուռ․ Հիւսիսային կողմինը Ցունաց մարագին դուռն է, որ

(32) Անցեալ տարի Ցոյնք գաղտնի նոյն դրան կղպանքը փոխած ըլլալով և զգացուելով՝ Լատինք և Հայք իրենց բանալիները փորձեցին և ստուգեցին Ցունաց խարդախութիւնը, որով կառավարութեան միջոցաւ կղպանքը և բանալիները վերստին այնպիսի ձեւի մէջ վերածուեցան, որ երեք բանալիներն եւս կարենան բանալ ։

տաւմ Հայոց աղօրիքն էր . Հարաւայինը Հայոց վանաց դուռն է . սորա վրայի սենեկաց և Ներսէի պատրոնգին համար Ցոյնք մեծամեծ վէճեր յարուցած են սկսեալ 'ի Պարոն Տէրէ մինչեւ Շըլթայակրի ժամանակները , ինչպէս կը ցուցընեն Հրովարտակք և կէօձէլիւ : Գաւթին կեդրոնէն կախուած կանթեղը Ցունաց է , զոր Հայք 1813ին եօթն անգամ վերցուցին . որովհետեւ տեղն իրենցն էր . Ցոյնք կրկին կախեցին եւ յարդ կը մնայ , որով Հայք ստիպուեցան իրենց լապտերը դրան վրայի սենեկի պատուհանէն կախել ձեղունէն բեւեռուելը անհնար լինելով :

Այս գաւթի աւելածութեան համար ևս Հայք ընդ երկար Ցունաց կըռիւներուն դիմադրած են և 'ի վերջոյ թողած են նոցա . գաւթին տանիքը Հայք սալած են , ըստ որում իրենց սեպհական է , մնացեալ մասը Լատինաց անցած է :

Գաւթին մէջի երրորդ կամ արեւելեան դուռը Հայոց փայտաշէն երկփեղկեայ այն դուռն է , զորմէ խօսեցանք Ա . Գլխուն մէջ :

Ահա այս տեղ կ'աւարտի մեր Ազգին 'ի Տնօրինական տեղիս ունեցած սեպհականութեանց, ընկերովն իրաւանց և սովորութեանց համառօտութիւնը, յորմէ դուրս են Ազգային առանձին վանքերը եւ կալուածները, որ յԵրուսաղէմ, 'ի Բեթղեհէմ, 'ի Ռէմլէ, 'ի Յոպպէ և յայլ շրջակայս։

ՎԵՐՋ

Digitized by Google

# ՑԱՆԿ


| | Եջ |
|---|---|
| ԱԶԴ . | |
| Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ . | 5 |
| Ազգ. սեպհական տեղիք ՚ի Ս. Յարութիւն . | 6 |
| Ընկերովի սեպհականութիւնք և իրաւունք . | 20 |
| Գիշերային ժամերգութիւնք, խնկարկութիւնք, և այլն . | 27 |
| Երեկոյեան ժամերգութիւն և Թափօր . | 34 |
| Տարեկան հանդէսներ . | 39 |
| Հայոց հանդիսի օրերը . | 49 |
| Ջարդարանք և աւերածութիւն . | 56 |
| Ս. Յարութեան դուռը բանալ և փակել . | 60 |
| Երից ազգաց փոխադարձ պարտաւորութիւնք . | 63 |
| ԳԵՐԵԶՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ . | 70 |
| Ազգ. սեպհական տեղիք ՚ի Ս. Աստուածածին . | 71 |
| Ընկերովի սեպհականութիւնք և իրաւունք . | 75 |
| Պատարագելու կարգ և հանդէսներ . | 83 |
| ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ . | 90 |
| ԲԵԹՂԵՀԷՄ . | 95 |
| Նախկին եկեղեցի . | ״ |
| Արդի եկեղեցի . | 100 |
| Ս. Ծննդեան Այր . | 105 |
| Ժամերգութիւն. Պատարագ. հանդէսք և այլն . | 111 |
| Արտաքին երկաթեայ դուռ . | 121 |


Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google